

Լ. ԽԱՉԻԿՅԱՆ

ՄԱՏԹԵՈՍ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՄԱՏԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ\*

Հայ միջնադարյան մատենագրության պատմությանը նվիրված ձեռնարկներում և բանասիրական աշխատություններում դեռևս շատ կան թուուցիկ հիշատակված այնպիսի գործիչների անուններ, որոնք ճանաչված ու անվանի լինելով իրենց ապրած ժամանակներում, այժմ լիակատար մոռացության են մատնված: Այդպիսի գործիչներից մի քանիսի ձեռագիր աշխատությունների ուսումնասիրությունից ստացված արդյունքները վիճարկում են այն մասին, որ մեր ժողովրդի պատմության հետ կապված մի շարք չլուսարանված ու կնճառ հարցեր հնարավոր է պարզաբանել հենց այդ մոռացված հեղինակների աշխատությունների միջոցով:

Այդպիսի մի մատենագիր է ԺԴ դարի վերջին և ԺԵ դարի ստաջին տասնամյակներում ապրած ու ստեղծագործած Մատթեոս Զուղայեցին:

Միջնադարում Մատթեոս Զուղայեցին համարվել է նշանավոր հայ մեկնիչներից մեկը. նրա աշխատությունները գրալի չափով բնագործնակվել ու տարածվել են և՛ Հայաստանում, և՛ հայաշատ գաղթավայրերում:

ԺԷ դարի հեղինակ Վարդան Բաղիշեցին՝ «և՛ ոք են արարեալ զլուծմունս և զքաղութանս մատուածաշունչ գրոց» ցուցակի մեջ, Գր. Տաթևացու և Առաքել Սյունեցու աշխատությունների թվարկումից անմիջապես հետո, տեղ է հատկացնում Մատթեոս Զուղայեցուն և տալիս նրա կարևոր աշխատությունների ցանկը, այսպես՝ «զԼուկասու գլխոյ քաղութան և զՅոհաննու գլխոյ փոքր քաղութան. զԳործոց քաղութան և Մ քարոզ Մատթեոս Զուղայեցին է արարեալ՝ աշակերտ Գրիգորի Տաթևացոյն»<sup>1</sup>:

1750 թվականին Կ. Պոլսում լույս է տեսնում Մատթեոսի «Վասն քարոզութեան բանի, առեալ ի վարդապետութենէ սուրբ հօրն Եւագրեայ...» աշխատությունը, հրատարակիչ Հովհաննես դպրի ստեղծած՝ «Գիրք ութն խորհրդոց մեղաց, արարեալ սրբոյ հօրն Եւագրեայ, և հաւաքեցեալ ի մի յոգնաջան երկամբ Մատթեոսի վարդապետի բանասիրի» խորագրով:

Մխիթարյան հայագետները անուշադրությամբ ու արհամարհանքով էին վերաբերվում միջնադարյան հայ մատենագրության բոլոր այն գործիչների նկատմամբ, որոնք բացահայտ ու անհաշտ հարձակումներ էին գործել կաթոլիկ եկեղեցու գաղափարախոսության և Վատիկանի կողմից Արևելք ուղարկվող պրոպագանդիստների դեմ:

\* Ձեկուցված է Մատենագրանի VIII գլխական սեսիային, 1956 թ. փետրվարի 2-ին:

<sup>1</sup> Մատենագրան, ձեռ. № 8444, էջ 182ա-182բ:

Հանրահայտ է, որ կաթոլիցիզմի և հայ ունիթոսների դեմ հատկապես ուժեղ սրայքար ծավալվեց Հայաստանում ժ.Գ դարի երկրորդ հիսնամյակում, Տաթևի գալրոցի հիմնադիրներ ու գեկալարներ Հովհան Ռրոտնեցու, Գրիգոր Տաթևացու և նրանց բազմաթիվ աշակերտների կողմից:

Այդ աշակերտներից էր նաև Մատթեոս Զուղայեցին, որի մասին «Պատմութիւն հայերէն գալրութեան» երկնատարանաց ընդարձակ աշխատության մեջ Գ. Զարբհանալյանն անհրաժեշտ է համարել գրել ընդամենը մի-երկու տող<sup>1</sup>: Իսկ մի այլ մխիթարյան՝ բանասեր Բ. Սարգսյանը, առանց լրջորեն ուսումնասիրելու նրա աշխատությունները, համարել է նրա լեզուն «գոհնիկ», մեկնարանությունները «ցամաք» և հայտարարել, որ նա իբր, Տաթևի գալրոցից դուրս «բազմաթիվ ընթերցողներ ունեցած պիտի չըլլա»<sup>2</sup>:

Գ. Զարբհանալյանի աշխատության առաջին տպագրությունից (1878 թ.) անցել է շուրջ 80 տարի, բայց, ցավոք, շատ աննշան բան է արված Մատթեոսի կենսագրության և նրա թողած ձեռագրական հարուստ ժառանգության ուսումնասիրման ուղղությամբ:

Միակ ուշագրության արժանի աշխատանքն այս բնագավառում պետք է համարել հանգուցյալ մեծանուն ու բազմալատասակ հայագետ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ի 3-րդ հատորում Մատթեոսի մասին գրված հոդվածը: Այստեղ հայերեն ձեռագրերի հրատարակված ցուցակներից հավաքված են նրա աշխատությունների վերնագրերը, մի երկու խոսք է ասված նրա կենսագրության մասին, ինչպես նաև նշված են հայագիտական բոլոր այն փոքրաթիվ ուսումնասիրությունները, որոնցում, այս կամ այն առիթով, հիշատակված է Մատթեոսի անունը:

Մեր սույն համառոտ հազարգամբ փորձում ենք Մատթեոս Զուղայեցու մեղ հասած բոլոր աշխատությունների և նրա մասին առկա մատենագրական տվյալների օգտագործմամբ առաջին քայլն անել շատ կողմերով ուշագրության արժանի և հետաքրքրաշարժ այդ մատենագրի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելու ուղղությամբ:

Մատթեոսի ծննդյան թվականի մասին սկզբնաղբյուրները չեն պահպանել որևէ տվյալ: Որպես ճանաչված մեկնիչ նա հրատարակ է իջել ժ.Գ դարի 90-ական թվականների սկզբներին, ուստի, կարելի է ենթադրել, որ ծնված պետք է լինի նույն դարի 50-ական թվականներին:

Բ. Սարգսյանը Եվագր Պոնտացու մասին գրած ուսումնասիրության մեջ, հարեանցիորեն անդրադառնալով Մատթեոսին, «հավանորեն ծննդյամբ Երզնկացի» է համարում նրան<sup>3</sup>:

Սակայն մեղ հայանի բոլոր աղբյուրները<sup>4</sup> միաբերան վկայում են այն մասին, որ Մատթեոսը Զուղայեցի է:

Ժ.Գ դարում հին Զուղան փոքրիկ մի գյուղաքաղաք էր: Գանվելով Արաքսի նշանավոր այն կամուրջի մոտ, որով անցնում էր միջագոգին

<sup>1</sup> «Մատթեոս վարդապետ վեցօրեայ արարչութեան վրայ Մեկնութիւն մը (ուսի), յիսուն այլ և այլ Բարոզը, յորոց երեք միայն հասած են առ մեղ, Աւետարանչաց ու Գործոց համառոտ Մեկնութիւններ, Եւագրի գրոց Բազուած մը»: («Պատմ. հայերէն գալրութեան», Բ., էջ 219—220):

<sup>2</sup> Արքայ հօրն Եւագրի Պոնտացույ վարք և մատենագրութիւնը, Վենետիկ, 1907, Առաջարան Բ. Սարգսյանի, էջ ձեռն—ձեռն:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ ձեռն:

<sup>4</sup> Թովմա Մեծափեցի, էջ 50—51, Վ. Բաղիշեցի, ձեռ. № 8444, էջ 182ա-182բ և այլք:

նշանակություն ունեցող կարավանային ճանապարհներից մեկը<sup>1</sup>, պետք է ենթադրել, որ դեռևս այդ ժամանակ Զուղան, այս կամ այն չափով, վեր էր ավել առևտրական մի հանգրվանի, իսկ Զուղայեցիները, որպես առևտրականներ ու միջնորդներ մասնակցում էին այդ առևտրին: Թեքև նաև դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Մատթեոսի աշխատությունները լի են առևտրի ու արհեստագործության մասին ուշագրավ բազմաթիվ ավյալներով:

Մատթեոսի տարբեր աշխատությունների մեջ գրանցված են ավյալներ, որոնք հնարավորություն են տալիս եզրակացնելու, թե մեր հեղինակը իր կյանքի առաջին շրջանում (մինչև Տաթևում հաստատվելը) շրջապատված էր առևտրի ու ճամփորդությունների է կատարել Հայաստանում և հարևան երկրներում:

Ավելորդ չի լինի ծանոթանալ նրա աշխատությունների վերը ակնարկված ավյալների հետ:

Այսպես, Կոստանդնուպոլսում լինելու մասին Զուղայեցին խոսում է իր քարոզներից մեկում, որը կրում է «Քարոզ սուրբ խաչի...» խորագիրը: Այստեղ նա պատմում է, թե ինչպես արարական արշավանքների ժամանակ Կ. Պոլսը փրկվել է կործանումից և աշխատում է համոզել իր ունկընդիբներին, որ այդ կատարվել է սուրբ խաչի գործությամբ: Այս կատակցությունում ի միջի այլոց, նա ասում է նաև, որ «իմ ականատես եղեալ սուրբ տեղեացն (Կ. Պոլսի), և համբուրեալ»<sup>2</sup>:

«Բան յաւետարանէն Յովհաննու» աշխատության մեջ Մատթեոսն աշխատում է բացատրել «օն» ձայնարկությունը, և հայանում է, որ դա ըստ ինքյան բան չի նշանակում, «զի բառ է երկրէ, որպէս Սերաստացիք կան ասեն, և Կարնոյ քաղաքացիք ալ, Արճիշեցիք՝ անէ, իսկ Խլաթեցիք, որ է Բզնունիք՝ օ ասեն յամենայն բանի»<sup>3</sup>:

Իժվար է պնդել, բայց հավանական է ենթադրել, որ մեր հեղինակն անձամբ եղել է Սերաստիա, Կարին, Արճեշ և Խլաթ քաղաքներում, և իր այցելած վայրերում ուսումնասիրել է ժողովրդի լեզուն, բանն ու բանը:

Նրա քննասեր ու խուզարկու բնավորության մասին ավելի ցայտուն վկայություն է սկանալով «Քննություն գործոց առաքելոց» աշխատության մեջ: Այստեղ առիթ է ներկայանում խոսելու գողի (բորոտություն) հիվանդության մասին: Մոկաց երկրում գողի ցավով առաապողներ շատ տեսնելով և ձգտելով սրտել գրա հարուցիչները, Զուղայեցին ուշագրություն է դարձրել մոկացիների սննդի վրա և պարզելով, որ նրանց սննդի մեջ մեծ տեղ է բռնում ծանրամարս կորեկի հացը, մեղրն ու ընկույզը՝ եղել է այն եզրակացություն, որ «այս (ցաւն) անկի ի տաք կերակրոյ՝

<sup>1</sup> Այդ կամուրջի մասին 16-րդ դարի քուրճ պատմիչ Շաբաթ-բեկը գրում է հետևյալը. «Կիսմուրջը հիմնած է տաշած ժայռի վրա անխախտ ամրությունը, վերևը դարձանալի հարթ և քարերը միացած են այնպես կանոնավոր և ամուր կերպով, որ ամենահնարագետ ճարտարապետը պետք է դարձանա: Կամարներն այնքան բարձր ու երկայն են, որ հիմի հիմքերի սրունքը 60, մյուսինը 50 պարսկական բազուկ է: Կամարի ստորին մասումը շինված է քարվանսարա, իսկ երկու ծայրումը դռներ՝ դարձանալի գեղեցկությամբ» (ՀԱ, 1899, էջ 60):

<sup>2</sup> Ձեռ. № 2229, էջ 230բ:

<sup>3</sup> Ձեռ. № 5871, էջ 34ա:

ի մեղքէ և յընկուզոյ և ի կորեկէ հացոյ: Եւ այս է պատճառն Մովսէս երկրին, յորում բազումք գողիք լինին»<sup>1</sup>:

Վերսիշչայ «Քննութիւն գործոց առաքելոց» աշխատութեան մի այլ հատվածից, որի հետ առիթ կուենանք ծանոթանալու այլ կապակցութեամբ, պարզվում է նաև, որ մեր հեղինակը հավանորեն շրջագայել է նաև Խաչենի շրջաններում:

1393 թվականից մեկ կամ մի քանի տարի առաջ Մատթեոսն եղել է նաև Աղթամարում<sup>2</sup>: Նրա աշխատութեաննների ամելի մանրակրկիտ հետադոտութեան ճանապարհով, թերևս կարելի էլինի ընդարձակել մեր հեղինակի ճանապարհորդութեաննների շրջանակները<sup>3</sup>: Մակայն մեջ բերված տվյալներն էլ միանգամայն բավարար են ցույց տալու համար, որ հանձինս Մատթեոս Զուղայեցու մենք ունենք մի մատենագիր, որը բնավ չի բավարարվել վանական սահմանափակ «իմաստութեաններով», այլ շրջագայելով Հայաստանում և Հայաստանի սահմաններից դուրս, շփվել է աշխատավոր ժողովրդի հետ, ծանոթացել է նրա նիստ ու կացին և գրագմուռներին, ուսումնասիրել է սոցիալական կյանքն իր տարրեր կողմերով և, ինչպես կատանենք ստորև, իր աշխատութեաննների մեջ լայնորեն օգտագործել է իր մթերած գիտելիքներն ու ուշագրավ դիտողութեաննները:

Որտեղ է ստացել Մատթեոս Զուղայեցին իր նախնական կրթութեանը, չգիտենք: Պարզ է սակայն, որ նա իր երիտասարդական տարիներին ուսումնասիրել է ոչ միայն հայ մատենագրութեանը, այլ նաև արապերին և արաբերեն գրավոր լեզվին, ծանոթացել է մահմեդականների կրոնական գրքերին այն աստիճան, որ անհրաժեշտութեան դեպքում կարողացել է քաղվածքներ անել նրանցից<sup>4</sup> և տալ յուրովի մեկնաբանութեանններ:

Բարձրագույն կրթութեան Մատթեոսը ստացել է Հովհան Ռրոանեցու և Գրիգոր Տաթևացու համալսարաններում. «Աշակերտ աեաոն Յովհաննու Ռրոանեցւոյն», «նուասա և յետին աշակերտի եռամեծացն Յովհաննու և Գրիգորի», «նուասա Մաթէոսի վարդապետի՝ աշակերտի եռամեծին Գրիգորի», «յաշխատութենէ վաշժապետին իմո Գրիգորի մեծի» և նման այլ արտահայտութեանններով, որ հանդիպում են Մատթեոսի աշխատութեաննների վերնագրերում և հիշատակարանների մեջ, նա իր հարգանքն է մատուցում իր նշանավոր ուսուցիչներ՝ Հովհ. Ռրոանեցուն և Գր. Տաթևացուն:

1391 թվականին Երնջակի Ապրակունյաց վանքում Զուղայեցին շարագրում է թվական ունեցող իր աշխատութեանններից անդրանիկը՝ «Մեկնութիւն Ղուկասու աւետարանին»: Պարզ է ուրեմն, որ Գր. Տաթևացու մանկավարժական ինքնուրույն գործունեութեան սկզբից (1386 թ.) ընդամենը 4—5 տարի հետո, մեր հեղինակն արդեն դուրս էր եկել աշակերտական շրջանից և շարագրում էր մեկնողական աշխատութեանններ:

<sup>1</sup> Ձեռ. № 1402, էջ 131ա

<sup>2</sup> Ձեռ. № 969, էջ 107բ:

<sup>3</sup> Ենթադրում ենք, օրինակ, որ նա պետք է եղած լինի նաև Հոռոմում:

<sup>4</sup> Այդպիսի քաղվածքներ դասում ենք նրա «Վասն հարցմանց անօրինաց» աշխատութեան մեջ. բերենք մեկ օրինակ. «Չայն որ ի ձեռ մսաֆն գրած է ի իկ: (27) վարաղն, թե Յիսես աւահուլաս և բալիմաթուհու...», և այլն (ձեռ. № 3854, էջ 298բ):

նույն այս տարիներին (1393-ից առաջ, հավանաբար 1392 թվականին) լինելով Ախթամարում, Մատթևոսը վեճի է բռնվել մանմեղսական մի դանիշմանի հետ և շարադրել է այդ վեճի բովանդակությունը ի խնդրո՞՛ճիրիան գյուղի տանուտեր Աբխտղամի, Վասն հարցման անօրինաց, դանազան պատասխանիք՝ խորագրով:

Վերոհիշյալ փաստերը վկայում են այն մասին, որ մեր հեղինակը ժԳ դարի 90-ական թվականների հենց առաջին տարիներին, դուրս գալով ուսումնասիրական շրջանից, ճանաչված վարդապետ էր Սյունիքում և Վասպուրականում:

Ծանր տարիներ էին դրանք հայ ժողովրդի համար: Լանկ-Թամուրի արյունարբու զորքերը ասպատակում էին Հայաստանի նահանգներն ու շրջանները, սպանում ու գերեվարում խաղաղ բնակչությունը, թալանում և ավերում գյուղերն ու քաղաքները:

Ե՛ր ժամանակի նեղութեան ուր աւերեալ քակեաց դաշխարնս ամենայն հուրն հարավային Թամուր կոչեցեալ՝— գրում է ս.յդ մասին Մ. Զուղայեցին 1395 թվականին, Տաթևի վանքում<sup>1</sup>:

Թամուրի զորքերը ամբողջ 13 տարի (այՊԱԵ ամէն մինչև ի ՊԽԸ ամթուականին) պաշարման մեջ էին պահում Երնջակի անասիկ բերդը, ուր գտնվում էր Զելաիրյան Անմեղի որդի սուլթան Թահիրը:

Ուշագրավ է, որ Երնջակի բերդում պաշարման մեջ է եղել նաև Մատթևոս Զուղայեցին: Այնտեղ է շարադրել նա Հակոբ Մծբնս հայրապետին նվիրված մի գեղեցիկ ապ, որտեղ ակնարկներ կան նաև հայ ժողովրդին հասած ծանր հարվածների մասին.

«Մեծի հանդիսի աւուրս  
Ան քեզ պաղատիմ Յիսուս  
Սուրբ բզնայրապետն Յակոբ  
Ան քեզ բարեխաւս ընկալ  
Աստանաւր վրտանկ հասեալ,  
Ով սուրբ հայրապետ ընտրեալ,  
Զորդիս քո գերի վարեալ,  
Զտաւն քո հանդիսի ցըրեալ...» և այլն<sup>2</sup>:

Երբ և որքան է Երնջակում պաշարման մեջ մնացել մեր հեղինակը՝ չենք կարող որոշել: Հայանի է սակայն, որ 1393 թ. նա գտնվում էր Տանձափարախ անասպատում՝ Տաթևի վանքին՝ դեմ առ դեմ, ձորակի մյուս կողմը: Այնտեղ «նստեալ լսիկ ի տան» նա շարադրել է Վասն քարոզութեան բանի» իր աշխատությունը:

1395 թ. նրան գտնում ենք Տաթևում, ինչպես ինքն է ասում՝ «պանդրխտական կենօք» — մի արտահայտություն, որը վկայում է այն մասին, թե Մատթևոսը իրեն պատահական ու ժամանակավոր հյուր էր համարում այդտեղ:

<sup>1</sup> «ԺԳ դարի՝ հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 613: »

<sup>2</sup> Ձեռ. № 425, էջ 46բ—47բ:

Մակայն, ըստ երևույթին, հենց այդ թվականին նա մշտապես հաստատվում է Տաթևում և նշանակալից գեր է կատարում Տաթևի համալսարանի կյանքում: Շուտով նա այնպիսի փորձառություն է ձեռք բերում դասախոսական ասպարեզում, որ մի-քանի տարի անց Գր. Տաթևացին նրան է արժանավոր համարում լինել իրեն ժառանգորդը, և Մատթևոսը, աշակերտների խնդրանք և բոլորի հաճությամբ, նստում է «յաթոս տէլէ-տութեան»<sup>1</sup>, այսինքն՝ դառնում է Տաթևի համալսարանի գլխավոր վարդապետներից մեկը:

Այս մասին տվյալներ է հաղորդում շատ կողմերով հետաքրքրական իր հիշատակարանի մեջ Թումա Սյունեցի գրիչը, Ծար գավառի Քարավաճառ գյուղում, 1402 թվականին:

Նա գրում է, որ Գրիգոր Տաթևացին շունելով որդի հարսպատ և ժառանգ վարդապետութեան իւրոյ՝ զժաղկեալն ամենայն բարութեամբ և զարդարեալն ամենալի շնորհիւ՝ վարդապետական խոնեմութեամբ և փիլիսոփէական արճեսալի՝ զախոյանն ընդդէմ հերձուածողաց՝ զվարդապետն Մատթէոս, զոր յայտ ամի (=1402 թ.), կամակցութեամբ սուրբ հոգոյն, և ջանիւ վարդապետին Գրիգորի, և ազաշանաւք գրոց աշակերտեալ անձանց՝ նստաւ յաթոս տէլէտութեան, զոր տէր աստուած վայելել տացէ, և պահեսցէ զսոսայ հայր որդով բերկրեալ՝ պսակ պարծանաց կաթողիկէ կկեզեցւոյ՞<sup>2</sup>:

1407 թվականի ինքնագիր<sup>3</sup> մի հիշատակարանից պարզվում է, որ Մատթևոսը միաժամանակ վարում էր Տաթևի վանքի վանահայրությունը պաշտոնը. «որ ի շար ժամու եղէ քաղաքապետ կկեալ ի սուրբ ուխտս Եւստաթէի» — գրում է նա<sup>4</sup>:

Ժամանակի քաղաքական անցուղարձերի արժեքավոր նկարագրությամբ Մատթևոսը մի այլ հիշատակարան է շարադրում նույն՝ 1407 թվականին, ոմն Մըմբարաքշահի պատվերով ընդօրինակած ավետարանի վերջում: Նա հայտնում է, որ ձեռագրի ընդօրինակությունը կատարվել է «ի դառն և ի նեղ ժամանակիս, որում ազգն նեաողաց անջինջ կորաւ և փոխանորդ նորին իշխեց արթոսյս Աւրպատականի թորդոմածին Ղարս-Ուսուֆ անուամբ. որ և մարտեաւ երկու անգամ և յազթահարեալ զոմն ի թոսանց շար գազանին Թամուրին՝ շարաբարու, անեղատեսիլ և շարասիրտ՝ անուամբ Ար[ուր]աքր: Եւ այն ևս ի վերին խնամոցն ամենակարողին աստուծոյ, որ ազատեաց աշխարհս ի յայն անիրաւ խնդրողացն, որ և դամենայն ազգ և դամենայն լեզու ի ներքս նոցա հնազանդ և գերի կային, որում ազատեաց զմեզ փրկիչն Յիսուս Քրիստոս...»<sup>5</sup>:

Մատթևոսը, ինչպես և ողջ հայ ժողովուրդը, որոշ հույսեր էին կապում թամուրյանների պարտության հետ: Կարծում էին, թե Աղբրեջանում և Հայաստանում իշխանությունը գրաված նոր տիրակալները բարվոքելու են ժողովրդի ծանր վիճակը: Մակայն բոլորի հեռ մեկտեղ, Մատթևոսը ևս

<sup>1</sup> Հուն. ὁ τελειωτής — կատարյալ բառից:

<sup>2</sup> «ԺՆ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին (1401—1450 թթ.), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955 թ., էջ 25:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>4</sup> ԺՆ դարի հիշատակարաններ, էջ 76:

շատ չանցած համազօլեց, որ անհիմն ու սին էին բոլոր այն սպասելիքները, որ ակնկալուում էին Կարա-Կոյունլուներին հաղթութեան անհռութեամբ:

Քաղաքական խորին հուսախաբութիւնն ու հոգեկան ծանր վիճակ էր սպրում 1410—1411 թվականներին Մատթեոս Զուգայեցին:

Մոռյլ գույներով է նկարագրում իր ապրած օրերը մեր հեղինակը Գր. Տաթևացու թաղման կապակցութեամբ արտասանած դամբանականի մեջ, ինչպես նաև իր գլուխ գործոցը կազմող «Քննութիւն գործոց առաքելոց» արժեքավոր աշխատութեան ընդարձակ հիշատակարանում: Մեջ ենք բերում այդ հիշատակարանից մի ուշագրավ հատված.

«Ի սպասել ազգիս հայկազեան և ի վերջին դարուս ստուցեալ ողոց տարածամ կորուսելոց՝ մեծի և փոքու, և ի ստորասուղեալ դասուն քահանայական, և ի հարեալ ժանկաց բանասերիւն, յամս թուականի ՊԿ (1411), ի բռնակալութեան ազգին թորգոմեան (իմա՝ թուրքմեն Կարա-Կոյունլուներին)... որ և յիշել եա գառաջին չարիսն թամուր կոչեցեալ կաղին և ի նոյն վաանգի գոլով...: Յայս դասնութեան ժամանակիս ես՝ նուստ և խեղդամահ ի մեզս Մաթէոս, յեանեալս յիմաստից և ազէաս ի գիանականաց և մնացեալս որր ի յիմ հարազատագոյն հարանց՝ հոգեկանաց և մարմնականաց, որ և յայսմ ամի կղև գրու կենաց մեծ բարունոյն իմոյ Գրիգորի... որոյ սուգն պաշարեաց զիս և եա մոռանալ դառօրեայ կենցաղս...» և այլն<sup>1</sup>:

Մխիթարական ոչինչ չի տեսնում իր շրջապատում մեր հեղինակը. ժողովրդի վիճակը ծանր է, հարկահանութիւնն անտանելի, հայ իշխանները միմյանց օժանդակելու և դորավիզ լինելու փոխարեն՝ կռուում են իրար դեմ, հոգեւորականութեանը անբարոյականացած է և շահասեր, ամենուրեք տիրում է բռնութիւն, աւլադակութիւն, խարերայութիւն և անբարոյականութիւն: Այս բոլորի մասին անշափ կարևոր ու հետաքրքրական տրվյալներ է գրանցում իր վերջին աշխատութեան մեջ Մատթեոսը, իսկ Գր. Տաթևացու թաղման առթիվ արտասանած դամբանականում իր ժամանակի վիճակը նկարագրում է հետևյալ հուսահատ տողերով. «Ամենեքեան աքացէն զմիմեանս, խածատեն գմարմինս իրերաց, բամբասեն զառաջնորդս իւրեանց, տրանջան ի տանուտեանէ իւրեանց. ի մարմինս մաշին, ի միտտանջին, ի հարկահանաց ձանձրանան, յանօրինաց սառապին, դախ լան, զգիշերն ողբան, բարիքն արտմին և չարացեալքն ուրախանան: Եւ այս ամենայն վասն մեզաց մերոց:»<sup>2</sup>:

Անձնական իր կյանքում ևս դասնութիւններ է ճաշակում Մատթեոս Զուգայեցին, նա բողոքում է իր աշակերտների ծուլութիւնից և միարանակից «ճուտ կզրայրներին» նյութած գալերից: «Այլ և անմեղազիր լինել ազաչեմ,— գրում է նա իր վերջին հիշատակարանում,— զի դասնութիւն ժամանակիս և աշխատանք (կամ «աղճատանք») չար խորհրդոց շփոթեալ աղտեղացուցին զհոգի և զմարմին իմ, մանաւանդ ծուլութիւն անգութ և անճազանդ աշակերտաց վիրաւորեցին զիս, և յաւէտ վիշաք ի սուտ կզբարց, որք անհրաժեշտ վաթարութեամբ դաննացուցին զիս. վասն որոյ և ոչ կարացի զբովանդակին մակազրել, այլ զսակաւս ի բազմաց...»<sup>3</sup>:

<sup>1</sup> ԺԵ գրքի հիշատակարաններ, էջ 119:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 120:

<sup>3</sup> Նույն տեղում:

1411 թվականից հետո Մատթեոս Զուղայեցու մասին սրևէ հիշատակություն չենք գտնում: Այդ ժամանակ նա արդեն այնքան ծեր կամ հիվանդ է եղել, որ իրեն համարել է կանգնած «ի գերեզմանի գրան»<sup>1</sup>: Երբ են բացվել նրա առաջ այդ գոները չգիտենք, ուստի և ծննդյան տարեթիվի հետ մեկտեղ առայժմ անհայտ է մնում նաև Մատթեոսի մահվան տարեթիվը:

Մատթեոս Զուղայեցին ապրեց ստեղծագործական կարճատև կյանք: Տարեթիվ կրող նրա աշխատություններից անգրանիկը, ինչպես արդեն ասացինք, շարագրված է 1391, իսկ վերջինը՝ 1411 թվականին: Այսպիսով, մեր հեղինակը ստեղծագործել է ընդամենը 20 տարի: Սակայն այդ երկու «դասն ու դժար» տասնամյակներում նա շարագրել է պատկառելի քանակությամբ աշխատություններ, որոնց ամբողջական ցանկը, ճշտված վերնագրերով, տալիս ենք ստորև, հնարավորության դեպքում նշելով նաև յուրաքանչյուրի գրության տարեթիվը և շարագրման վայրը:

1. «Ի գլխոյն Դուկասու հաւարումն բանից և հոյով քարոզք ի մեկնութենէ Իգնատիոսի հայոց վարդապետի, ժողովեալ աշխատութեամբ Մաարէնոսի աշակերտի Գրիգորի»<sup>2</sup>

Շարագրել է Երնջակի Ապրակունյաց վանքում, 1391 թվականին<sup>3</sup>:

2. «Յովհաննու Որոտնեցոյ տիեզերալոյս քարունապետի արարեալ բան յաւետարանէն Յովհաննու, որ ասէ՝ Ի սկզբանէ էր բանն և բանն էր առ սատուած»

Չնայած վերնագրում որպես հեղինակ գրված է Հովհան Որոտնեցու անունը, բայց աշխատությունը, ինչպես պարզվում է հիշատակարանից<sup>4</sup>, հիմնականում շարագրել է Մատթեոս Զուղայեցին:

Ընդհանրապես Մատթեոսը սիրում է իր աշխատությունների վերնագրերում նշել այն հեղինակների անունները, որոնցից այս կամ այն չափով օգտվել է այս կամ այն աշխատությունը շարագրելիս:

Սույն աշխատության գրության թվականը որոշ չէ, սակայն կարծում ենք, որ շարագրված պետք է լինի վերոհիշյալ՝ «Ի գլխոյն Դուկասու հաւարումն բանից» աշխատությանից անմիջապես հետո, սրովհետև հիշատակարանում հեղինակը հայտնում է, «որ և այս տեսութեան բանի ընդ նախասացեալ մեկնութեանն, որ ըստ Դուկասու աւետարանին է՝ գրեցի»<sup>5</sup>:

<sup>1</sup> Ժն դարի հիշատակարաններ, էջ 121:

<sup>2</sup> Օգտագործել ենք № 5332 ձեռագրում ընդօրինակված (էջ 58ա—154ա) բնագիրը: № 1345 ձեռագրի մեջ աշխատության վերնագիրը փոքր ինչ տարբեր է. և չնայած այդ ձևազարդ ընդօրինակված է ուշ շրջանում (1697 թ.)՝ նրա երկրորդ մասը ավելի նախնական է թվում. «Ի գլխոյն Դուկասու աւետարանչին, ի մեկնութենէ Իգնատիոսի սուրբ վարդապետին Հայոց, զոր յետոյ ևս՝ Մատթեոս վարդապետ, աշակերտ տեսան Յովհաննու Որոտնեցոյն ժողովեալ հաւաքեցի և արարի զայս քաղուած գիրքս առ ի յօդուտ ուսումնասիրաց անձանց» (էջ 6ա):

<sup>3</sup> ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 591—592:

<sup>4</sup> Ժն դարի հիշատակարաններ, էջ 121:

<sup>5</sup> ՏԵՍ ԼԲԻՎ՝ Ժն դարի հիշատակարաններ, էջ 121:



3. «Մաթէոսի վարդապետի, վասն հարցմանց անօրինաց գանազան պատասխանիր, զոր խնդրեալ բարեպաշտն Արիստղոս մեծ տանուաէրն Շիրիանայ»

Աշխատությունը շարագրել է Քի գրան սրբոյ խաչին ի կղզոջն Ախթամարայ, ընդ խօսելն մեր ընդ վաստակալը և սլիզդ դանիշմանին Ալի կոչեցելոյն, որ և յետոյ նա սպան զկաթողիկոսն Ախթամարայ զտէր Զաքարիա»<sup>1</sup>:

Ախթամարի Զաքարիա Բ. կաթողիկոսը նահատակվել է 1393 թվականին, ուստի աշխատությունը գրված պետք է լինի 1393-ից առաջ:

4. Գանձեր ու առեր

ա) «Տաղ ազնիւ (Յակորայ Մծրնայ հայրապետին) ի Մաթէոս վարդապետէ»

սկ. «Մեծի հանդիսի առւերս...

Շարագրել է Երնջակում, պաշարված լինելով Թամուրի զօրքերի կողմից, ուստի՝ 1386—1399 թթ. ընթացքում, թերևս մինչև 1391 թվականը: Տաղը ձայնագրված է բարդ ու բաղձաքանակ խաղերով<sup>2</sup>:

բ) «Կանոն երևման խաչին»

սկ. «Ի սկահից որդի  
Հաւր քո հրդաւրի...

Տների սկզբնատաներով հողվում են հետևյալ բասերը՝ Քի Մաթէոսէ, խնդրեաց Գրիգորն (Օերենց)»:

Գանձն ունի տաղ ու հորդորակ, որոնք նույնպես ձայնագրված են երաժշտական ճոխ խաղերով<sup>3</sup>:

գ) «Կանոն մեծահրաշ կիրակէի»:

սկ. «Միակդ ահաւոր  
Տէր և զաւրաւոր...

Ակրոստիքոս՝ «Մաթէոսի է, խնդրեաց Գրիգոր»<sup>4</sup>:

դ) «Գանձ մեծի երկուշարաթին»

սկ. «Ի սկզբան էին  
Արարեալ զերկին...

Ակրոստիքոս՝ «Ի Մաթէոսէ, խնդրեաց Գրիգոր»<sup>5</sup>:

<sup>1</sup> Ձեռ. № 969, էջ 107—112բ:

<sup>2</sup> Տե՛ս ձեռ. № 425, էջ 46բ—47բ:

<sup>3</sup> Ձեռ. № 425, էջ 255ա—258բ:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 261ա—262բ:

<sup>5</sup> Ձեռ. № 474, էջ 152ա—157ա:

և) «Մեղեդի անոյշ (սրբոյ հայրապետաց գ. ժողովոցն)  
ի Մատթէոս վարդապետէ»

սկ. «Միայն բանին հաւր իմաստնոյ  
Մտոայ վայելուչք արժանիք պատուոյ...

Ակրոստիքոս՝ «Մատթէոսի է երգս այս, նոր է գրեալ»<sup>1</sup>:

Այս գանձերի ու տաղերի մի մասը, ինչպէս ասացինք, ձայնագրված են երաժշտական ձևի խաղերով, մի հանգամանք, որ իրավունք է տալիս կարծելու, թե Մատթէոս Ջուղայեցին եղել է ոչ միայն բանաստեղծ, այլ նաև երաժիշտ-կոմպոզիտոր:

5. «Մատթէոսի վարդապետի աշխատասիրեալ վասն քարոզութեան բանի, ի վարդապետութենէն սուրբ հօրն Եւագրեայ, որ միտք անապատի կոչի և ի նորին վարուցն հեանողէ սրբոյն Նեղոսէ, որ ցան և ցիր գոյր ի բանս նոցա՝ հաւարեալ ի մի ի պէտս բանաւէր անձանց»

Շարադրել է Տանձափարախ անապատում, 1393 թվականին<sup>2</sup>:

6. «Նուսա Մատթէոս վարդապետի՝ աշակերտի եռամեծին Գրիգորի աշխատասիրեալ առ ի հաւարումն բանից, որ հայի առ Զ (6) աւուր գործս աստուծոյ, ի խնդրոյ Սարգիս կրօնաւորի, ի բանն Սողոմոնի, որ ասէ՝ Ամենեցուն հարաւարապետն ուսոյց ինձ իմաստութիւն»

Շարադրել է 1395 թվականին, Տաթևի վանքում<sup>3</sup>:

7. «Վասն ժամանակաց գիտելոյ գորքանն»

Սինքրոնիկ փոքր աղյուսակ է, որով որոշվում են եկեղեցական ու քաղաքական կարևոր ճանաչված իրադարձությունների թվականները՝ ջրհեղեղից և այլ դեպքերից հաշված:

Շարադրել է 1402 թվականին, հովանարար Տաթևում:

Ձեռագրերում (օրինակ № 3854, էջ 293բ—295ա) քնդօրինակված է Մատթէոսի աշխատությունների շարքում, բայց հեղինակի անունը վերնագրում չի նշված:

8. «Նորին Մատթէոսի վարդապետի ներբողեան ողբերգարար, ոգեալ ի քաղումն երջանիկ բարունապետին Գրիգորի: Ընդ նմին յիշատակեալ գողքս լալեաց կոտորածին, որ ի Վրացաուն՝ ի Փայտակարան քաղաքի, քանզի պատկեր աւուրց ի մի դիպեցաւ, մանաւանդ ի հրաշագեղ Կարապետ՝ եղբայր իւր»

Գրիգոր Տաթևացին մահացել է 1409 թ. դեկտեմբերի 27-ին, և թաղվել է 1410 թ. հունվարի սկզբներին, ուստի Մատթէոսն իր դամբանականը շարադրած ու արտասանած պետք է լինի 1410 թ. սկզբներին, Տաթևում<sup>4</sup>:

<sup>1</sup> Ձեռ. № 471, էջ 106բ—108բ:

<sup>2</sup> ՓՊ դարի հիշատակարաններ, էջ 606:

<sup>3</sup> ՓՊ դարի հիշատակարաններ, էջ 613:

<sup>4</sup> Ամենայն հովանապետութեան Մատթէոսին է պատկանում նաև Գրիգոր Տաթևացու կյանքի և կենսագրութեան ուսումնասիրութեան համար կարևոր նշանակութեամբ ունեցող վարձարանական այն գրվածքը, որը պահպանվել է մեր Մատենադարանի № 6607 ձեռագրի 5ա—6ա էջերում, «Ի սին աւուր՝ ի դեկտեմբերի Իէ (27) ննջումն և հանգիստ երիցս երանեալ քաջ բարունապետին Գրիգորի, աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ խորագրով: (Տղվ. ՓՊ դարի հիշատակարաններ, էջ 103—104):

9. «Մաաթէոսի նուաստ և յեաին աշակերտի եռամեծացն Յովհաննու և Գրիգորի, աշխատասիրեալ ի քննութիւն գործոց սուաքելոց, ի մեկնութենէ սուրբ հարցն Յովհաննու Ոսկերեբանի և Եփրեմի, ի Խնդրոյ հարազատ եղբոր մերոյ Յակոբ վարդապետի՝ մականունն Ովսանանց կոչեցեալ»

Մատթեոսի ամենաընդարձակ ու կարևոր աշխատութիւնն է, շարագրել է 1411 թվականին, հալածանքար Տաթևում<sup>1</sup>:

### 10. Քարոզներ

Մենք արդեն տեսանք, որ «Ով ոք են արարեալ զլուծմունս և ըզքաղուածուս Աստուածաշունչ գրոց» ցանկի հեղինակը Մատթեոսին է վերագրում նաև «Ծ. (50) քարոզ»<sup>2</sup>:

Նրա քարոզներն ընդօրինակված են մեր Մատենագարանի №№ 662, 969, 1357, 2114, 2157, 2229 և այլ ձեռագրերում, բայց դրանց քանակը 50-ի չի հասնում<sup>3</sup>:

Քարոզները գրված են, ինչպես ընդունված էր, Աստվածաշնչից քաղված բնարաններով: Որպես բնարան ընտրված են «Մի սպանանէր», «Մի սուտ վկայէր», «Մի շնար», «Մի գողանար», «Արթուն կացէք յամենայն ժամ», «Յարեցան սուտ մարգարէք», «Ես եմ հովիւ քաջ» և այլ բազմաթիվ աստվածաշնչային խոսքեր:

Մատթեոսի այս քարոզները լի են պատմական, տնտեսագիտական, կենցաղագիտական, դրականագիտական հետաքրքրութիւն ներկայացնող բազմաթիվ ուշագրավ ասույթներով և ճանաչողական մեծ արժեք են ներկայացնում:

Քարոզների շարագրման թվականը որոշ չէ: 1391 թվականին շարագրված «Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից» աշխատութիւնը նույնպես պարունակում է քարոզներ և գրված հենց ի նպաստ քարոզչութեան, հակաճառութեան և բեմբասացութեան (եւ պիտանայութիւն սորա ի քարոզս բանի և ի կազ գրուցաց, և ի բեմբասացութիւնս): Արդ, Մատթեոսի քարոզների և այդ աշխատութեան որոշ հատվածներ բառացի համընկնում են միմյանց: Նկատի ունենալով այդ հանգամանքը, հակված ենք կարծելու, որ իր քարոզները նույնպես Մատթեոսը շարագրել է ժԴ դարի 90-ական թվականներին «Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից» աշխատութիւնից (գրված 1391 թ.) հետո:

Սրանով ավարտվում է Մատթեոս Զուղայեցու մեզ հայտնի աշխատութիւնների ցանկը:

Զուղայեցին, սակայն, զբաղվել է նաև ձեռագրերի ընդօրինակման աշխատանքով: Նրա բազմացրած ձեռագրերից մեզ հայտնի են հետևյալ երեքը:

1. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աշխատութիւնը, ընդօրինակված շուրջ 1397 թ. Ատոմ արեղայի խնդրանքով<sup>4</sup>:

2. Ավետարան, ընդօրինակված 1407 թ. Տաթևում, Յովել քահանայի խնդրանքով<sup>5</sup>:

<sup>1</sup> ԺԵ դարի հիշատակարաններ, էջ 118—121:

<sup>2</sup> Ձեռ. № 8444, էջ 182ա-բ:

<sup>3</sup> № 2229 ձեռագրում, օրինակ, ընդօրինակված ենք գտնում ընդամենը 39 քարոզ:

ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 615:

ԺԵ դարի հիշատակարաններ, էջ 76—77:

3. Մի այլ ավետարան, ընդօրինակված նույն թվականին, ոմն Մբմ-  
բարաքչահի պատվերով<sup>1</sup>:

Անտարակույս, մեզ հասած կամ մեզ հայանի այս երեք ձևագրերը  
Մատթեոսի ընդօրինակությունների միայն մի չնչին մասն են կազմում:

Այսպիսով, Մատթեոս Զուղայեցին ներկայանում է մեզ, որպես Տա-  
թևի նշանավոր համալսարանի անվանի դասախոսներից մեկը, որն իր  
սակզածագործական ոչ երկարատև կյանքի ընթացքում շարադրել է մի շարք  
ծավալուն աշխատություններ, զբաղվել է քարոզչական գործունեությամբ  
և ընդօրինակել է բազմաթիվ ձևագրեր:

Մեր սույն համառոտ հաղորդման հիմնական նպատակն է պարզել, թե  
ինչ արժեք են ներկայացնում մեր հեղինակի աշխատությունները ժԳ—ժԵ  
դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմությունը ուսում-  
նասիրելու համար:

Մենք արդեն տեսանք, որ Մատթեոս Զուղայեցու աշխատությունների  
մեծագույն մասը կրոնական բովանդակություն ունեն: Նրանք կամ մեկ-  
նություններ են, կամ քարոզներ, կամ էլ աստվածաբանական գրականու-  
թյան այլ ժանրերին պատկանող սակզածագործություններ:

Նման իր ժամանակի բոլոր եկեղեցական գործիչներին, նա իր աշխա-  
տություններով ձգտել է քարոզել և ուսուցանել նա էկեղեցու գաղափա-  
րական գրույթները, փորձել է բարձրացնել եկեղեցականների հեղինակու-  
թյունը, նպաստել եկեղեցու տնտեսական գիրքերի ամրապնդմանը:

Իր բազմաթիվ քարոզներում Մատթեոսը խոսում է այն մասին, որ  
օտարազգի տերերի բռնությունների ու հալածանքի դեմ, ինչքան էլ դրանք  
ծանր լինեն, ժողովուրդը չպետք է ընդվզի ու պայքարի, և իր փրկության  
հույսը պետք է դնի միայն երկնային դատավորի վրա. «Գիտասցուք մեք,  
քրիստոնայքս,— գրում է իր աշխատություններից մեկում Մ. Զուղայե-  
ցին,— թէ Գրիտոս է մեզ դատաւոր, ապա պարտ է ի նա ընկենուլ զդա-  
տաստան չարչարողացն մերոց և հալածողացն, և մեզ ուրախութեամբ տա-  
նել զլիկանսն և մի մեզէն վրէժխնդիր լինել մեզ, զի Քմ է վրէժխնդրու-  
թիւն», «սէ տէր», և այլն<sup>2</sup>:

Մակայն սխալ կլիներ միջնադարյան որևէ եկեղեցական հեղինակի գնա-  
հատել, ելնելով միայն նրա հասարակական ու սոցիալական հայացքներից:

Իր աշխատությունների մեծագույն մասը Մատթեոս Զուղայեցին շա-  
րադրել է «Վասն քարոզութեան բանի», այսինքն նկատի ունենալով ուն-  
կընդիրների լայն աուդիտորիա՝ արհեստավորների, առևտրականների, շի-  
նականների և, ընդհանրապես, աշխատավոր մարդկանց:

Նա շատ լավ տեղյակ է եղել, որ «Բազումք ի լսել քարոզութեանն  
բամբասեն, թէ սպիտակ կուտեալ է, կամ կու խաբէ, կամ թէ յերկար կու  
ասէ, և կամ ձանձրանան ի բազմութենէն, և կամ այլ իմն բան խօսին՝ ոչ  
ունկն գնելով քարոզութեանն»<sup>3</sup>:

Իսկ որպեսզի ժողովուրդը չբամբասի քարոզիչին, ունկն գնի նրա քա-  
րոզությանը և քարոզը հասնի իր նպատակին, այդ բոլորի համար անհրա-

<sup>1</sup> ԺԵ դարի հիշատակարաններ, էջ 75—76:

<sup>2</sup> Քհն յառևտրանէն Յովհաննու», ձեռ. № 5871, էջ 26բ:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 19ա:

ժեշտ էր խոսել ժողովրդի լեզվով, կանգ առնել նրան հուզող սոցիալական ու տնտեսական հարցերի վրա, պարզ ու պատկերավոր օրինակներ ընտրելով ժողովրդի առօրյա կյանքից ու կենցաղից՝ դրանց միջոցով դյուրամարս դարձնել գաղափարական բարդ խնդիրները և այլն և այլն<sup>1</sup>:

Հենց այդպես էլ վարվել է Մատթեոս Զուղայեցին: Եվ դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Մատթեոսի աշխատությունները լի են ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ժողովրդի վիճակի, կենցաղի, զրադժուժքի և բազմաթիվ այլ հարցերի մասին հսկայական թվով այնպիսի տվյալներով ու ասույթներով, որոնք մեծապես բարձրացնում են նրանց ճանաչողական արժեքը և իրավունք են տալիս մեր հեղինակին պատվավոր տեղ գրավելու ԺՂ—ԺՅ դարի հայ մատենագիրների շարքում:

Աշխատենք Մատթեոս Զուղայեցու աշխատությունների մեջ ցրված կարևոր այդ տվյալների ու ասույթների օգտագործմամբ փոքր ինչ ծանոթանալ նրա սպրած ժամանակաշրջանի հետ:

Ինչպես արդեն տեսանք, Մատթեոսը որպես մատենագիր նրապարակ իջավ ԺՂ դարի վերջերին, երբ Լանկ-Թամուրի զորքերն ասպատակում էին Հայաստանը. «Ի ժամանակի նեղութեան, ուր աւերեալ քակեաց զաշխարհս ամենայն հուրն հարաւային՝ Թամուր կոչեցեալ» — գրում էր այդ մասին Զուղայեցին:

Թամուրի մահվանից և նրա ժառանգների պարտությունից հետո Ազրբեջանում և Հայաստանում իշխանության գլուխ անցավ Կարա-Կոյունլու քոչվորական ցեղերի առաջնորդ Կարա-Յուսուֆը:

Սակայն երկար տարիներ պետք չէին համոզվելու համար, որ Կարա-Կոյունլուների նոր գինաստիայի հաղթանակով հայ ժողովրդի վիճակի մեջ ոչ մի փոփոխություն չպետք է տեղի ունենար: 1411 թ. գրած իր «Քննութիւն գործոց առաքելոց» աշխատության հիշատակարանում Մ. Զուղայեցին, տեսանք, որ հայտնում էր, թե նոր տիրապետողների բռնակալությունը հիշել է տալիս «զառաջին շարխան Թամուր կոչեցեալ կաղին» և այլն:

Այս ընդհանուր ձևով արված հայտարարությունները կոնկրետ ու իմաստալից բովանդակություն են ստանում Զուղայեցու տարբեր աշխատությունների մեջ, ուր նա, այլ և այլ ասիթներով անդրադառնում է հայ ժողովրդի կրած առաապանքներին:

Իր «Վասն քարոզութեան բանի» աշխատության մեջ, օրինակ, այլազգի բռնավորների մասին մեր հեղինակը գրում է հետևյալ ուշագրավ տողերը.

«Բարձեալ, գրացիք են մեզ շար բռնաւորք և այլազգիք, զի ի մին հոգոյ և նոյն ծնօղաց եմք, և զնոյն պատկերս մարդոյ ունին, և միտք և բան և ամենայն՝ հաւասարք են, և սիրտ գաղանի ունին. և յանխնայ կեղեքեն և տանջեն զմեզ. ոչ միայն ի մարմինս, այլ և ի հոգիս վնասեն. զինչս յափշտակին, զմարմինս չարչարեն, և ի մեզս ձգեն, և ի հաւատոց զրկեն, նախատեն և հալածեն, և սպանանելով զմեզ՝ համարին պաշտօն մատուցանել աստուծոյ»<sup>2</sup>:

<sup>1</sup> Այս մասին հետաքրքրական տվյալ է պահպանված միջնադարյան մի քարոզի մեջ, որտեղ ասված է. «Մովորութիւն է հանճարեղաց և իմաստնոց յորժամ տղիտաց և տխմարաց զմեծամեծաց և զբարձրագունից և զանյայտ իրաց զճառս բանիւ կամին յառաջ բերել՝ զբնտանի և զբժրոն աւրինակաց բուռն հարկանել, այսինքն ի տեսելոց կամ ի լսելոց յարացուցիչ զսնտեսիցն յանդիման կացուցանել իմացուած» (ձեռ. № 1098, էջ 13բ):

<sup>2</sup> Ձեռ. № 6607, էջ 229բ:

Մեջ բերված հատվածի վերջին միտքը ավելի պարզորոշ շարադրված է Զուգայեցու քարոզներից մեկում այսպես՝ «Արդ, ասեն դոքա (մուսուլմանք), եթէ ոք զքրիստոնեայ կողուպէ կամ սպանանէ՝ արքայութիւն նմա է»<sup>1</sup>:

Այլ կապակցութեամբ նա հայտնում է, որ տիրող բռնավորները «զարբւնրս աղքատաց ծծեն և անիրաւ դատեն»<sup>2</sup>, կամ «բազում անգամ... սպանանեն վասն ազանութեան և կամ վասն նախանձու»<sup>3</sup>, կամ որեւէ մեկի մահվանից հետո նրա թողած գույքից հարուստ բաժին չստանալու դեպքում՝ «զրկեն զգաւախն, մանաւանդ զի գրովանդակն տանին»<sup>4</sup> և այլն, և այլն:

Մատթեոս Զուգայեցին հայ ժողովրդի համար ստեղծված ծանր իրավական ու տնտեսական վիճակի պատճառները բացատրում է միջնագարյան «մեղք և հատուցում» սկզբունքով: Ատավածային կամքով հայերը, իբր, պատժվում են իրենց մեղքերի համար: Նույնիսկ Թամուրը բնարված է եղել տիրոջ կողմից պատուհասելու համար հայերին ի դիմաց իրենց գործած մեղքերի<sup>5</sup>:

«Վասն մեղաց մերոց» սկզբունքով է բացատրում Զուգայեցին նաև բնական ու հասարակական բոլոր արհավիրքները: «Սոյնպէս և այժմ մի զհետ միոյ շրջին երբեմն մահ տարածամ՝ առհասարակ կոտորին, երբեմն շարժ, երբեմն գայլ, երբեմն մարախ, թրթուր, ջորեակ, ժանկ, երբեմն կարկուտ, սով, սրածութիւն, հեղեղ և այլքն: Սոքա յաշխարհէ ոչ բառնին վասն մեղաց, այլ միշտ ի սասանութիւն պահեն զմարդիկ» — գրում է նա «Ահա մեղաւորք կորիցին» բնաբանով քարոզում<sup>6</sup>:

Սակայն ուշագրավ է այն հանգամանքը, որ Զուգայեցու աշխատութեանն ի մեջ մեղավոր են համարվում հասարակութեան ոչ բոլոր խավերի ներկայացուցիչները հավատարապես:

Զուգայեցու կարծիքով հիմնական մեղավորները հայ իշխաններն են: Ժողովրդի ապահովութեան ու բարեկեցութեան, նույնիսկ նրանց հավատի պահպանութեան հիմնական պատասխանատուն աշխարհական իշխանութեան ներկայացուցիչներն են: «Առանց Տրդատայ ոչ կարաց սուրբն Գրիգոր ի Հայոց մին կին ի հաւատ բերել» սրամտորեն նկատում է Զուգայեցին իր քարոզներից մեկում<sup>7</sup>, և հայ ժողովրդի համար ստեղծված ծանր կացութեան հիմնական մեղքը գցում է հայ անմխարան, վավաշոտ ու անգութ իշխանների վրա:

«... Իսկ զքրիստոնեայ իշխանն,— գրում է նա,— պոռնիկս և վաւաշոտս և մատնողս և սպանողս, յորմէ յաճախեալ մեղօքն բարկացուցին զանբարկանալի բնութիւնն. և եւ զմեզ ի կոխան անօրինաց, և գերեցաք յամենայն ազգս, և վա՛յ է ինձ»<sup>8</sup>:

<sup>1</sup> Զեռ. № 2229, էջ 188բ:

<sup>2</sup> «Բան յաւետարանէն Յովհաննու», ձեռ. № 5871, էջ 46բ:

<sup>3</sup> «Քարոզ ի բանն՝ Մի սուտ վկայէք», ձեռ. № 2229, էջ 130ա:

<sup>4</sup> «Քննութիւն գործոց առաքելոց», ձեռ. № 1402, էջ 235ա:

<sup>5</sup> Տես «Քննութիւն գործոց առաքելոց», ձեռ. № 1402, էջ 84բ, ուր ասված է «ի պատերազմն զաներկիւզն բնորեմբ և տէրն ի պատուհասն՝ զանհաւատն (ընտրէ), որպէս... այժմ զթամուրն»:

<sup>6</sup> Զեռ. № 662, էջ 161ա:

<sup>7</sup> Զեռ. № 2229, էջ 206բ:

<sup>8</sup> «Քննութիւն գործոց առաքելոց», ձեռ. № 1402, էջ 258բ:

Այս բոլորից հետո, զարմանում է Զուգայեցին, հայ ֆեոդալական տների վերջին տկար ու անզոր ներկայացուցիչները միարանելու և միմյանց դորավիզ լինելու փոխարեն, շարունակ կռվում են իրար դեմ. «Այժմ մնացեալ սոււա իշխանքն հայոց զմիմեանց ջիւս հատանեն և զարմանալիս (է), զի բոլոր երկիրս աւեր և վասն աւերածիս կուսին» — գրում է նա<sup>1</sup>:

Մեղքերից անմասն չեն նաև հայ հոգեօրականության ներկայացուցիչները, մեծատունները, առևտրականներն ու արհեստավորները, սակայն նրանց նկատմամբ Զուգայեցին համեմատաբար մեղմ արտահայտություններ է դործածում:

Մատթեոսի ապրած ժամանակները հայ ինքնագլուխ եկեղեցին միակ հաստատությունն էր, որն այս կամ այն չափով միավորում էր հայ ժողովրդի ցիրուցան արված զանգվածները և աշխատում, իր շահերից ելնելով ու յուրովի, վառ պահել ազգային գրականության ու կուլտուրայի այն արագիցիաները, որոնք կարևոր ու անհրաժեշտ էին գաղափարական ու սոցիալ-տնտեսական իր գիրքերի պաշտպանության ու ամրապնդման համար:

Այդ իսկ պատճառով, Մատթեոս Զուգայեցու գրական գործունեության մեջ կարևոր տեղ է բնութագրում պայքարը մահմեդականության, այլ խոսքով՝ օտարազգի տիրապետողների գաղափարախոսության դեմ: Ամբողջովին այդ խնդրին է նվիրված վերոհիշյալ «Վասն հարցմանց անօրինաց, զանազան պատասխանիք» աշխատությունը, որը շարագրված է 1393-ից առաջ Ախթամարում, ոմն դանիշման Ալիի հետ ունեցած վիճարանությունից հետո: Այստեղ պարզ ու դյուրըմբռնելի պատասխաններ են տրված բոլոր այն հարցերին, որոնցով մահմեդական կրօնի պետերը գիմում էին հայերին՝ քրիստոնեության գիրքերի խախտման ու նրանց հավատափոխ անելու մտադրությամբ:

Նման հարցեր են շոշափված նաև Մատթեոսի «Յարեցան սոււա մարգարէք» բնարանով քարոզի մեջ<sup>2</sup>: Ուշագրավն այն է, որ իր պատասխաններով Մատթեոսը բնավ չի վիրավորում մահմեդականների կրօնական զգացմունքներն ու չի ցանկանում գիպչել նրանց համոզմունքներին:

Նրա կարծիքով մահմեդականները պարտավոր են հնազանդվել իրենց մարգարեի սլատվիրաններին, որովհետև Մահմեդն է նրանց կուսպաշտությունից հավատքի բերել, «բայց Ձեզ արժան է նմա հնազանդել, զի զձեզ ի հաւատք երեր և ի կուսպաշտութենէ գարծոյց» — գրում է նա<sup>3</sup>:

Այլ բան է քրիստոնյաների խնդիրը. Մահմեդը պատմական ասպարեզ է իջել մի քանի հարյուր տարի այն բանից հետո, երբ հայերը հեթանոսությունը մերժելով ընդունեցին քրիստոնեություն, ուստի հայերը իրավասու են նրան չճանաչելու և չընդունելու. «Մահմատն ձեր,— գրում է նա,— մեզ ոչինչ երախտիք չունի, զի երևի՞ զմեզ ի հաւատք գտաւ, և մեք աստուածապաշտ էաք երբ նա երևի, և մեզ ոչինչ չէ սուուցել և ի նմանէ հաւատք չենք առել. վասն այնորիկ և ոչ ճանաչեմք զնա»<sup>4</sup>:

Մեջ բերված հատվածը բավական է ցույց տալու համար, որ Մատթեոս Զուգայեցին ձգտում էր հաստատել այլակրոն ժողովուրդների միջև

<sup>1</sup> «Բնություն գործոց առաքելոց», ձեռ. № 1402, էջ 215բ:

<sup>2</sup> Ձեռ. № 2229, էջ 185բ—190բ:

<sup>3</sup> Ձեռ. № 3854, էջ 202բ:

<sup>4</sup> Ձեռ. № 3854, էջ 302ա:

համերաշխություն և փոխադարձ հարգանք, միևնույն ժամանակ վճռակա-  
նապես դեմ դուրս գալով հայերին բռնի մանձեղակահանացման քաղաքակա-  
նության դեմ:

Մեր հեղինակի ապրած ժամանակներում, օտար տիրապետության հե-  
տևանքները զգացվում էին նաև ժողովրդի առօրյա կենցաղում և նիստ ու  
կացի մեջ: Հայերը հրաժարվելով իրենց հնամենի ու գեղեցիկ անձնանուն-  
ներից, իրենց երեխաներին տալիս էին մոնղոլական, թուրքական ու արա-  
բական անձնանուններ՝ Ալամ-խաթուն, Յախշի-բեկ, Աղբուղայ, Արգլա,  
Գամուր-բուլա և այլն, և այլն:

Մատթեոս Զուղայեցին փաստակար է համարում այդ սովորությունը  
և գտնում է, որ պատժի են արժանի այն քահանաները, որոնք քրիստոնյա  
մանուկներին անվանակոչում են օտար ու խորթ անուններով:

«Վասն որոյ,— գրում է նա,— պատժին քահանայք, յորժամ քրիս-  
տոնեայ տղային Դուարագին դնեն կամ Փախրատին» և այլն<sup>1</sup>:

Մատթեոս Զուղայեցու աշխատությունները շատ ավելի կարևոր նյու-  
թեր են պարունակում իր ապրած ժամանակաշրջանի Հայաստանի ներքին  
կյանքի, սոցիալ-անտեսական հարաբերությունների և կուլտուրական երե-  
վույթների ուսումնասիրության համար:

Նախ, համառոտակի ծանոթանանք նրա աշխատությունների մեջ ցըր-  
ված այն տվյալների հետ, որոնք վերաբերում են դյուղական կյանքի տար-  
բեր կողմերին:

Իր «Քննութիւն գործոց առաքելոց» աշխատության մեջ Զուղայեցին  
ֆեոդալական հասարակության դասային կառուցվածքը տալիս է հետևյալ  
աստիճանավորմամբ՝ «թագաւոր, իշխան, ձեռնաւոր, տանուտէր, շինական»<sup>2</sup>:

Բարձրագույն երկու աստիճանները Զուղայեցու ապրած ժամանա-  
կաշրջանում գրավում էին, ըստ մեծի մասին, Հայաստանի օտարազգի տի-  
րապետողները՝ քոչվորական ցեղերի ավագանիները և պետական պաշտո-  
նյաները: Հայ նվաճված ժողովուրդը տեղ ուներ միայն (քաղաքացիներն  
ի նկատի չենք առնում) հիերարխիկ սանդուղքի ստորին աստիճաններում  
(«ձեռնաւոր, տանուտէր, շինական»):

Ձեռնավորները ֆեոդալի կողմից նշանակվող այն պաշտոնյաներն էին,  
որոնք հաշվառման էին ենթադրում հարկատու տվյալ օրյեկտից՝ դյուղից  
կամ քաղաքից դանձվելիք հարկի չափը, ցուցակագրում էին բոլոր աշխա-  
տունակ չափահաս մարդկանց և հավաքում հարկերը:

Յուրաքանչյուր դյուղական համայնքի մեջ կային ազգեցիկ և ունևոր  
ընտանիքների ավագներ՝ տանուտերեր, որոնք ներկայացնում էին դյուղա-  
կան համայնքը պետության և ֆեոդալի առաջ ու պատասխանատու էին  
հարկերի ժամանակին և ըստ որոշյալ չափի դանձման համար:

Վերոհիշյալ իր աշխատության մեջ Մ. Զուղայեցին «անկարգ», այսինքն  
հաստատված կարգից դուրս ու ամբօրինակ դյուղերի շարքին է գասում  
այն դյուղերը, որոնք չունեն ձեռնավոր ու տանուտեր:

Ուշագրավ այդ հատվածում, որի հետ արժե ծանոթանալ, Զուղայեցին  
պատասխան է տալիս այն հարցին, թե «Քանի են աւերակն» (այսինքն  
ավերակների ինչ տեսակներ կան): Պատասխանը տալիս ենք ստորև.

<sup>1</sup> «Քննութիւն գործոց առաքելոց», ձեռ. № 1402, էջ 195ր:

<sup>2</sup> Ձեռ. № 1402, էջ 83ր:



«Նախ, կոչի աւերակ անապատն, որ ոչ է բնու շինեալ... երկրորդ՝ անկարգ շէնն, որ ոչ ունի ձեռնաւոր և տանուաէր՝ աւեր կոչեմք, որպէս խաչինեցէք (իմա՝ Խաչենացիք)՝: Երրորդ, աւեր կոչեմք, թէ իցէ ձեռնաւոր և տանուաէր, և ոչ սերմանեալ աշունն և գարունն, և ասեմք՝ աւերեցաւ: Չորրորդ, աւեր կոչեմք յորժամ փախեալ լինին շինացիքն, և տեղիքն դատարի: Հինգերորդ՝ կատարեալ աւերն, յորժամ դեղն բոլոր ջնջի մահուամբ կամ սրով. և զի այլոցն գոյ հնար շինութեան, բայց յեանոյս՝ ոչ»<sup>2</sup>:

Այս և նախորդ մեջբերումից պարզ ու սրտշակի կարելի է հետևցնել, որ ձեռնափորները և տանուաւերերը, որպէս գյուղական համայնքի ազդեցիկ և ունեւոր անդամներ՝ շինականների նկատմամբ արտոնյալ մի դաս էին կազմում:

Գյուղական համայնքը խորն շերտափորում էր ապրել: Գյուղական բնակչութեան մի զգալի մասը ծանր հարկապահանջութեան հետևանքով գրկվելով արտադրութեան միջոցներից, ստիպված էր կամ փախչել քաղաք, կամ էլ համադրուղացի փարթամների «հովանու տակ» մտնելով՝ ենթարկվել նրանց տնտեսապէս և իրավապէս:

Այս երևույթը նկատվել ու արձանագրվել է Զուգայեցու կողմից «Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո» բնաբանով գրված քարոզում: Այստեղ հեղինակը խոսում է հնազանդութեան և ենթակայութեան ձևերի մասին, որոնցից է համարում նաև «ըստ կարեաց», այսինքն՝ կարիքից մղված հնազանդութունը. «Որպէս աշակերտ, — գրում է նա, — վասն կարեաց իւրոց հնազանդի վարդապետին և նա տիրէ նմա իբրև սեպհական տէր... և աղքատք մեծատանց, որպէս ի քաղաքս և ի գիւղս է տեսանել, որք ընդ հովանեաւ փարթամացն բազումք կան վասն կարեաց իւրեանց»<sup>3</sup>:

Կարևոր են նաև Զուգայեցու հայտնած ավյայները գյուղացիներից գանձվող հարկերի մասին: Նա հանվանե հիշատակում է դալան հարկը, որը գանձվում էր հպատակ ժողովուրդներից ի գիմաց գինվորական ծառայութեան, կոոր, որը տառապանք է համարում, ինչպէս նաև «տուգանքները» — մի հավաքական տերմին, որի տակ պետք է հասկանալ մի շարք հարկեր և այլն:

Այն աստիճանի ծանր են եղել այդ հարկերը հայ շինականութեան համար, որ ոմանք ստիպված դիմել են հավատափոխութեան: Զուգայեցին ուղղակի հայտնում է, որ մարդիկ ուրանում են իրենց հավատքը և ընդունում մահմեդականութուն նաև «վասն տուգանաց զալանի» և «վասն տառապանաց, զոր կոռ ասեն»<sup>4</sup>: Պետք է կարծել, որ մահմեդականութուն ընդունածների վիճակը փոքր ինչ բարվոքվել է, և այս ճանապարհով օտար տիրապետողները երբեմն ձգտել են իրագործել ասիմիլյատորական իրենց քաղաքականութունը:

Զուգայեցին ուշագրավ ավյայներ է հաղորդում նաև պարսկալեզու աղբյուրներում «կոնալղա» կոչվող այն հարկի մասին, որն արտահայտվում էր թագավորական սուրհանդակներին, պետական պաշտոնյաներին, օտար-

<sup>1</sup> Խաչինի գյուղերում ձեռնափոր և տանուաւեր շինելու մասին այս վկայութեանը մեծ հետաքրքրութեան է ներկայացնում և արժանի է լուրջ ուշադրութեան:

<sup>2</sup> Ձեռ. № 1402, էջ 83բ:

<sup>3</sup> Ձեռ. № 969, էջ 172բ:

<sup>4</sup> «Քննութիւն գործոց տառակոց», ձեռ. № 1402, էջ 140ա:

երկրյա գեապաններին և նրանց ուղեկիցներին, ծառաներին ու ձիերին կերակրելու, ապաստան տալու, նրանց բոլոր կարիքները հոգալու պարտավորությամբ:

Մեր հեղինակը «Կոնստանդինոպոլիսի» փոխարեն գործ է ածում շատ հաջող, բայց երևույթին ժողովրդական ծագում ունեցող «բանահյուս» տերմինը: Հայտնում է, որ «բանահյուսացն պիտոյանան ծախք»<sup>1</sup>, իսկ մի այլ տեղ («Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո» բնարանով քարոզում) բացատրում է, որ սերն ու հարգանքը կարող են լինել և կամավոր, և ակամա: Ակամա է այն կեղծ «սերը», որ մարդիկ ստիպված են լինում «երկնչելով ի նոցանէ» ցույց տալ բանահյուսներին, չար թագավորներին և իշխաններին, ծառայել նրանց «ինչս տալով» և այլն<sup>2</sup>:

Իր մի այլ քարոզում Զուղայեցին խոսում է եկեղեցական տուրքի մասին, հայտնելով, որ «տուրքն, որ առ աստուած չափով և համարով է, այսինքն բայ ընչից իւրեանց, զի համարով ժ (10)-էն զմինն խնդրէ»:

Զուղայեցու կողմից նշված հարկերից բացի հայ գյուղացիությունը նրա ապրած ժամանակաշրջանում պետությանն ու ֆեոդալին վճարում էր բազմաթիվ այլ հարկեր ևս, որոնց մեր հեղինակը իր աշխատություններում առիթ չի ունեցել անդրադառնալու:

Այդ հարկերի մեծ մասը գանձվում էր հարկային պաշտոնյաների կողմից՝ գյուղովի: Յուրաքանչյուր գյուղական համայնք, իր տանուտերերի և ձեռնավորի միջոցով պարտավոր էր հավաքել տվյալ գյուղի վրա ըստ հարկային ցուցակների գրված սղջ հարկը և հանձնել պետական պաշտոնյաներին: Եվ անա այստեղ բացվում էր շարաշահության մեծ առաքել գյուղի տանուտերերի ու ձեռնավորների համար: Մրանք, օգտագործելով իրենց գիրքն ու անտեսական կշիւրը, գյուղական համայնքից պահանջվող հարկերի իրենց վրա գրված բաժինը ևս բարդում էին չունեւոր ու աղքատ իրենց համագյուղացիների վրա:

Այս մասին ևս իր քարոզներից մեկում շատ հետաքրքրական տվյալ է հաղորդում Մ. Զուղայեցին: Նա գրում է. «Կոչին ծածուկ գող և տանուտէրք գեղոց և վերակացուք, որք յաղքատս զրկեն, և այնպէս երևեցուցանեն, թէ մեք աւելի տամք և յաղքատացն առեալ տան, և զինչս իւրեանց պահեն»<sup>3</sup>:

Ուշագրավ են նաև Զուղայեցու հաղորդած տվյալները շինականների փախուստի մասին գեղի այլ շրջաններ և հեռավոր երկրներ, մի բան, որ հատկապես ժԴ և ժՆ դարերում Հայաստանում մասսայական շափեր էր ընդունել:

Զուղայեցին մի առիթով, բանության ֆուտսների մասին խոսելիս, հայտնում է, որ «Իշխանաբարն զշինութիւնն պակասեցուցանէ և յայտ է ի շինականացն, զի յորժամ իշխանութեամբ շարժին իշխանքն՝ թողուն և փաղչին, իսկ յորժամ ընկերանայ՝ նոքա վարեն և առաւելացուցանեն ըզշինութիւնն»<sup>4</sup>:

<sup>1</sup> «Քննութիւն գործոց առաքելոց», ձեռ. № 1402, էջ 50ր:

<sup>2</sup> Ձեռ. № 2229, էջ 143:

<sup>3</sup> «Քարոզ ի բանն՝ մի գողանար», ձեռ. № 2229, էջ 133ա:

<sup>4</sup> «Քննութիւն գործոց առաքելոց», ձեռ. № 1402, էջ 76ա:

Գյուղացիութեան փախուստի առաջն առնելու նպատակով, գեոսկո իլ-խանութեան ժամանակ, մշակվել էին մի շարք միջոցառումներ: Ռաշիդ-աղ-զինը հայանում է, որ իրենց գրանցված վայրերից այլ շրջաններ փախած գյուղացիների վերագարձման համար հատուկ պաշտոնյաներ էին ուղարկվում:

Զուգայեցու նույն «Քննութիւն գործոց առաքելոց» աշխատութեան մի հատվածից կարելի է հետևցնել, որ փախած գյուղացիների վերագարձման ու ավերակ մնացած շրջանների վերաբնակեցման համար աշխարհագիր էին կատարում: Ճիշտ է, այդ հատվածում մեր հեղինակը աշխատում է բացատրել Օգոստոս կայսեր ժամանակ տեղի ունեցած աշխարհագրի ինչ լինելը, բայց նրա տված բացատրութեւնը, անտարակույս, բխել է իրերի ժամանակակից վիճակից: Նա գրում է. «Զի աշխարհագիրն այն էր, որ զինչ տեղիք որ շատ էին բնակիչք՝ անտի առեալ տանէր յաւերական և շինէր. և զինչ տեղոյ շինական, որ կայր ի յայլ տեղիս՝ զայն ի յիւր բնական հայրենիքն տանէր»<sup>1</sup>:

Բազմաթիվ տվյալներ ու ակնարկներ են ցրված Զուգայեցու աշխատութեւններում նաև գյուղատնտեսական աշխատանքների, աղբով այգիները սրարտապեցնելու պրակտիկայի, և այլ հարակից հարցերի մասին, հիշատակված են նաև երկրագործական մի քանի գործիքների անուններ, և այլն, և այլն: Առանց վարանումի կարելի է ասել, որ մեր հեղինակի մեկնողական ու աստվածաբանական բովանդակութեամբ աշխատութեւններն ու քարոզները շատ ավելի նյութեր են պարունակում աշխատավոր մասսաների կյանքի ու կենցաղի պայմաններն ուսումնասիրելու համար, քան մեր նշանավոր պատմիչներից շատերի աշխատութեւնները:

Այս բանն ավելի ցայտուն կդառնա քաղաքային կյանքի ու կենցաղի մասին Զուգայեցու գրանցած տվյալների հետ ծանոթանալուց հետո:

«Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից» աշխատութեան մեջ մեր հեղինակը հայանում է, որ Ղուկաս ավետարանիչը մարդկային բնութեւնը, իրր, նմանեցրել է քաղաքի հետ, և այդ կապակցութեամբ քաղաքների արտաքինի մասին հաղորդում է հիշատակութեան արժանի տվյալներ: Քաղվածաբար մեջ ենք բերում աշխատութեան այդ մասից մի քանի հատված:

«Քաղաքն ամրացեալ է պարսպօք և պուրջօք...: Քաղաքն են տունք, բաժանեալք ի միմեանց...: Յիւրաքանչիւր տունս գործի ուրիշ գործ... Բարերարքն պահեն ի քաղաքի, իսկ զվատթարս՝ արտաքս հանեն...: Սպասաւորք կարգեալ են ի քաղաքի բերել նմա զամենայն ինչ...: Բազում դրոււնք են քաղաքին...», և այլն<sup>2</sup>:

Իսկ «Քննութիւն գործոց առաքելոց» իր ամենակարևոր աշխատութեան մեջ մեր հեղինակը առիթ է ունենում պատասխան տալու այն հարցին, թե քաղաքային բնակչութեւնը աշխատանքի բնույթով ինչ խավերից է բաղկացած: Քաղաքի բնակիչներին Զուգայեցու կարծիքով կարելի է բաժանել 10 խմբի, հետևյալ կերպ.

«Նախ, այնոքիկ, որ վայրապար շրջին, զի ոչ ունին գործ ի յայտանուն քաղաք, և գնան:

<sup>1</sup> Ձեռ. № 1402, էջ 99ա:

<sup>2</sup> Ձեռ. № 1345, էջ 63ա—63բ:

Երկրորդ, որ պատահամբ կան, որպէս մտրողքն, որ թէ պատահի՞  
ուանն, և թէ ոչ՝ մնան (անօթի):

Երրորդ, որ աշխատանօք ապրին, որպէս մշակք:

Չորրորդ, որք հնարօք ապրին, որպէս արուեստաւորք:

Հինգերորդ, բանահոգութեամբ, որպէս դալար (°) և դեպանք:

Վեցերորդ, հարամութեամբ և գոգութեամբ:

Եփներորդ, շատաստանաւ և իրաւամբք, որպէս դատաւորք:

Ութներորդ, իմաստութեամբ և հանճարով, որպէս գիտունք, որք են  
ուսուցանողք:

Իններորդ, աղօթիւք և պահօք, որպէս ճգնաւորք:

Տասներորդ, իշխանութեամբ, որպէս հոգևոր և մարմնաւոր թագա-  
ւորք»<sup>1</sup>:

Ձի կարելի ասել, թե այս բաժանումը մեծ ճարտարութեամբ է կա-  
տարված: Ակնբախ է քաղաքարեակներին անպատճառ 10 խմբի բաժանելու  
ցանկութեանը (որանով պետք է բացատրել, անշուշտ, դեպանների ու  
աղօթողների համար հատուկ խումբ սահմանելը): Միևնույն ժամանակ չի  
կարելի չզարմանալ առևտրականների մասին հիշատակություն չունենալու  
կապակցութեամբ:

Բերված ցանկի վերոհիշյալ թերութիւնները, սակայն, մասնակի են  
և այն, ամբողջովին վերցրած, զգալի հետաքրքրութիւն է ներկայացնում՝  
լրացնելով մեր գիտելիքները միջնագարջան հայկական քաղաքների բնակ-  
չութեան գասերի մասին:

Հատկապէս կարևոր պետք է համարել քաղաքներում մշակների գոյու-  
թեան մասին Մատթեոսի հազորդած ակղելութիւնը, որը լրացվում է նրա  
մյուս աշխատութիւնների մեջ գրանցված տվյալներով:

Պարզվում է, որ «Մշակն ի վարձու ամենայն ոք վասն գործոյ կալ-  
նու...: Ըստ կամաց տեառն ասնէ զգործն...: Մի օրն մին գահեկան լինի  
մին մշակի վարձն...: Մշակ ոք ոչ կարէ ազնիւ նիւթ գործել կամ կարել...:  
Մշակն ոչ կարէ ինչս յետս ձգել վասն վաղուանն, զի հաղիւ զաւուրն հանէ  
պայենի...: Շարակով մանէ ի տունն...: Չարչարեալ է մարմին մշակին՝  
աղտոտեալ և սեպեալ, և նոյնպէս ննջէ», և այլն:

Այս հատվածները քաղված են Ջուղայեցու «Ջանացարուք մտանել  
բնդ գունն նեղ» բնարանով քարոզից<sup>2</sup> և նույնը կրկնված ենք գտնում նաև  
«Քննութիւն գործոց առաքելոց» աշխատութեան մեջ<sup>3</sup>:

Այսպիսով, Ջուղայեցին հնարավորութիւն է տալիս մեզ պարզելու,  
որ մշակները վարձվում էին քաղաքներում մասնագիտական պատրաստու-  
թիւն չպահանջող ամեն կարգի սև աշխատանքների, հատկապէս՝ բեռնա-  
կրութեան համար: Նրանց ստացած աշխատավարձը հաղիվ բավարարել է  
օրվա ազրատիկ պարենը («Ինչս ոչ կարէ յետս ձգել վասն վաղուանն, զի  
հաղիւ զաւուրն հանէ պայենի»):

Սրանով, սակայն, չեն սպառվում մշակների մասին Ջուղայեցու աշ-  
խատութիւններում ցրված տվյալները: Նա հայտնում է նաև, որ մշակներ  
կային նաև գյուղերում: «Քանի կերպիւ մարդ ասնու ինչ ի մարդոյ» հար-

<sup>1</sup> Ձեռ. № 1402, էջ 155ա—155բ:

<sup>2</sup> Ձեռ. № 2157, էջ 41ա—41բ:

<sup>3</sup> Հմմ. ձեռ. № 1402, էջ 102ա—102բ:

ցին մի տեղ նա պատասխանում է՝ «չորս կերպիւ», և կերպերից մեկը համարում է վարձկանությունը. «Գի, — շարունակում է նա, — լինի մշակ և հովիւ և այլ ինչ, և առնուն համարով աւուրց զվարձս»<sup>1</sup>. մի այլ տեղ ակնարկ ունի երկրագործական աշխատանքների ժամանակ վարձվող մշակների մասին, «որ յանդի և ի հրատարակն առնեն (գործ) առանց պատկասանաց»<sup>2</sup>:

Մշակները պարտավոր են աշխատել մինչև ուշ երեկո, «այլ թէ հիւանդանա ի կէսօրն՝ ոչ առնու զվարձն»<sup>3</sup>, կամ՝ որ շոշ արասցի զգործն կամաց վարձողին՝ ոչ առնու վարձ»<sup>4</sup>, և այլն:

Գյուղերից քաղաք փոխած ոչ բոլոր դարիպներին էր հաջողվում մշտական կամ ժամանակավոր գործ ձարել այնտեղ. այս մասին կարևոր մի տվյալ կա հայկական միջնադարյան առակներից մեկում<sup>5</sup>: Հասկանալի է ուրեմն, որ մշտական աշխատանք և ապրուստի սրևէ այլ միջոց չունեցող քաղաքարձակ սոցիալական այդ շերտը, այսօր վարձկան լինելով, վաղը կամ մյուս օրն ստիպված պետք է լիներ մուրացիկանության ձևով կարկանդակ և կամ, նույնիսկ, գիմել գողության: Գրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Զուգայեցին քաղաքի բնակչության շերտերի իր բաժանման մեջ հատուկ տեղ է տալիս «մուրողներին» ու «հարամիներին և գողերին»: Եվ ուշագրավն այն է, որ մեր հեղինակն արգարացնում է գողերին, որովհետև նրանք ապրուստի այլ միջոց չունենալու պատճառով էին գիմել այդ ծայրահեղ միջոցին:

Այս մասին Զուգայեցու մտա կարգում ենք. «Գիտելի է զի զանազանել արժան է զգողին դէմսն և զընչից տէրսն: Քանզի են, որ աղքատք են առենեկին և առնեն գողութիւն, և զայս անճարակութիւնն առնէ, այսպիսեացս ներելի է գողութիւնն, զի հարկաւոր պիտոյք բնութեանս հարկեաց առնել զգործն զայն»<sup>6</sup>: Միևնույն ժամանակ պատժի արժանի են համարվում բոլոր այն վաղանի ու հայանի գողերը, որոնք զրկում են ուրիշներին, թալանում ու հափշտակում ոչ թե կարիքից զրգված, այլ իրենց ունեցվածքը կրկնապատկելու, շառլության ու զեխության մեջ ապրելու համար: Գրանց շարքին է դասում Զուգայեցին կաշառատու իշխաններին, վանքերի ընչաքաղց առաջնորդներին, գիվանադպիրներին, որոնք խարդախում են փաստաթղթերը, ծուռ գատավորներին, գյուղերի տանուտերերին, որոնք հարկերի ծանրությունը բարդում են աղքատ համագյուղացիներին վրա, խարերա առևտրականներին, խարդախ արհեստավորներին և նմաններին:

Այլ առիթով մենք արգեն ասացինք, որ Զուգայեցու աշխատությունների մեջ հատկապես մեծ տեղ են բռնում արհեստագործության ու առևտրի վերաբերյալ այս կամ այն առիթով գրանցված տվյալները: Գրանք կասկած չեն թողնում այն մասին, որ մեր հեղինակը երկար ժամանակ ապրել է

<sup>1</sup> «Քննութիւն գործոց առաքելոց», ձեռ. № 1402, էջ 118բ:

<sup>2</sup> «Քարոզ փասն աղաւթինութեանս», ձեռ. № 2229, էջ 180բ:

<sup>3</sup> Ձեռ. № 6607, էջ 179բ:

<sup>4</sup> Ձեռ. № 662, էջ 149ա:

<sup>5</sup> Տե՛ս Н. Я. Марр, Сборники притч Вардана, часть II, Тексты, СПб, 1894, էջ 147:

<sup>6</sup> «Քարոզ ի բանն՝ մի գողանար», ձեռ. № 2229, էջ 153բ:

հայկական քաղաքներում և ի մոտո ծանոթ է մի շարք արհեստների արտադրական պրոցեսներին ու առևտրականների գործունեության մի շարք կողմերին:

Նրա աշխատությունների մեջ հիշատակված են դարբնությունը, սսկերչությունը, արծաթագործությունը, պղնձագործությունը, հյուսնությունը, սստայնանկությունը, կերպասագործությունը, աղեգործությունը, պարանագործությունը, ներկարարությունը, դանկարարությունը, անձուղագործությունը և այլ արհեստներ: Իսկ որոշ դեպքերում, նա ոչ միայն թուռցիկ հիշատակություն է անում արհեստագործության այս կամ այն ճյուղի մասին, այլ տալիս է արտադրական պրոցեսի ամբողջական նկարագրություն, թվարկում է արհեստավորի գործիքները, մի խոսքով, մատակարարում է հայ միջնադարյան արհեստագործության ուսումնասիրողներին անզնահասակի նյութեր:

Ծանոթանանք այդ կարգի տվյալներից մի քանիսի հետ, որոնք հատկապես շտայրեն ցրված են Զուգայեցու Վճնութիւն գործոց առաքելոց՝ աշխատության մեջ:

Ահա սստայնանկի աշխատանքի պրոցեսի և դադգահի ուշագրավ նկարագրությունը. «... Սստայնանկ, յորժամ սստան հենէ, նախ չափէ զմի թելն և ապա հենէ. և ի գործելն՝ սստիւքն և ձեռօք վճարէ. և զինչ գործէ՝ ծրարէ ի վերայ սալմնին, ոչ գիտելով, թէ զինչ գործեաց՝ մինչև վճարէ. և ի վճարելն հատանէ, և ապա դարձեալ յետ տա ի սալմնէն, և կրկին չափէ, և տեսանէ զգործն. թէ բարի է՝ փառաւորի ի տեսանելն զնա, և թէ գարշ է՝ արամի. և ի ծախելն կրկին փառաւորի՝ զգինս առնելով աշխատանաց իւրոց»<sup>1</sup>:

Սրանից պակաս հետաքրքիր չէ ճոնի աշխատանքի նկարագրությունը, գարձյալ նույն աշխատությունից. «Ճոնն հանէ զայլ կենդանեաց մորթ և աղէ և չորացուցանէ, և դարձեալ լուանայ և հանէ զմիսն և զնէ յադոց՝ գարէ ալերը և խմորով, և հանեալ դարձեալ չորացուցանէ, և ապա գործէ և կակղէ, և յետոյ ներկէ, և ի բազում մորթոյ մի հանգերձ կարէ»<sup>2</sup>:

Այս նկարագրությունը ուշագրավ է հատկապես այն տեսակետից, որ հնարավորություն է տալիս պարզելու աշխատանքի բաժանմանն ոչ խոր սստիճանը կաշեգործության մի բնագավառի — մուշտակագործության մեջ. ինչպես պարզվում է, աշխատանքի բոլոր պրոցեսները, սկսած կենդանու կաշին քերթելուց՝ մինչև մուշտակ կարելը կատարվել է միևնույն արհեստավորի (ճոնի) կողմից:

Արժե ծանոթանալ նաև քիմիսա կամ նաշիճ կոչվող թանկարժեք գործվածքի պատրաստման ուշագրավ նկարագրության հետ: Զուգայեցին հայտնում է, որ այդ արհեստը պատկանում է ծանր ու դժվար արհեստների թվին, և բացատրում է այսպես. «Գլի զվարայ սսկին ի վերայ մորթոյ կացնեն և մանր թել կարեն, և այնպէս հնարեն ի գործելն, որ այն բարակ թելին սսկին երեսն ի վեր լինի. և վասն այսորիկ դժուար է այս գործ քան զամենայն ինչ...»<sup>3</sup>:

<sup>1</sup> Ձեռ. № 1402, էջ 64ա:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 189բ--190ա:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 10ա:

Նույն տեղում՝ «զինչ է պիտոյ կարգացողացն» հարցին Զուգայեցու տված պատասխանն է մեջ, մեկ առ մեկ թվարկվում են դարբնի բոլոր գործիքներն ու պարագաները. «Կոանն և սլէշտիկն, քուրան և կրակն, փուքսն, գործելին, գաղն, և կոանաւորքն, երկաթն և յետ ամենեցուն ջուրն, որով մխէ և ամբի»<sup>1</sup>:

Կարելի էր մեջ բերել նաև աղեգործության, պարանագործության, ներկարարության և այլ արհեստների մասին Մատթեոսի հաղորդած տվյալներից քաղված քններ, բայց բավականանաք սրանով և անցնենք առևտրի ու շուկայական հաստատությունների մասին մեր հեղինակի հաղորդած տվյալներին:

Հայանի է, որ մոնղոլական ծանր տիրապետության ընթացքում Հայաստանի ու հարևան երկրների քաղաքներին ծանր հարված հասցվեց: Համաշխարհային առևտրի մեջ նշանակալից դեր կատարող մի շարք բաղամամարդ քաղաքներ, մոնղոլական տիրապետողների գիշատիչ հարկային քաղաքականության հետևանքով, աստիճանաբար անկման դիմեցին: Քաղաքների մի մասն էլ շարունակում էր իր գոյությունը, սակայն շատ ավելի համեատ մասշտաբներով էր մասնակցում տարանցիկ առևտրին: Այնուամենայնիվ սխալ կլիներ կարծել, թե Մատթեոս Զուգայեցու ապրած ժամանակաշրջանում Հայաստանի քաղաքներն ամբողջովին կորցրել էին իրենց նշանակութունը, որպես միջազգային տարանցիկ առևտրի կարևոր հանգրվաններ:

Թավրիզից դեպի Սև ու Մեջերկրական ծովերի նշանավոր նավահանգիստները ամուսն էրբեմնի բանուկ ճանապարհների վրա, որոնք իրենց մի մասով անցնում էին Հայաստանի վրայով, դեռևս շարունակում էին իրենց գոյությունը մի շարք քաղաքներ (Երզնկա, Խլաթ, Արճեշ և այլն): Հայ առևտրականները կարևոր դեր էին կատարում նաև հարևան երկրների առևտրի ու արհեստագործության նշանավոր կենտրոններում՝ Թավրիզում, Սուլթանիայում, Իանձակում, Թիֆլիսում, Ամիգում, Հալեպում և այլ մարդաշատ քաղաքներում:

Հայ խոշոր առևտրականները, որոնք այս շրջանում խոջա կոչումով են հանդես գալիս աղբյուրներում և շարժական ու անշարժ հսկայական կալվածքների տեր դասնալով կոչվում են նաև մեծատուններ, բացի առևտրական գործունեությունից զբաղվում էին նաև վաշխառությամբ, հարկերի կապալառությամբ, իսկ հաճախ նաև կատարում էին երկրի տերերի հանձնարարությունները, որպես գիվանագետներ ու գեսպաններ:

Մատթեոս Զուգայեցու աշխատություններում ուշադրության արժանի վկայություններ կան նաև առևտրականների ու վաշխառուների գործունեության մասին:

Այսպես, իր քարոզներից մեկում Զուգայեցին հայանում է, որ ավագակները «ոչ կարեն յամենայն ժամ աւազակութիւն առնել և ոչ յամենայն տեղիս», իսկ վաշխառուները, ընդհակառակը «վաշխ առնուն յամենայն ժամ՝ զցայգ և զցերեկ, և յամենայն տեղիս՝ ի մէջ մարդկան և ի մէջ հրասպարակի, և զամենայն թագաւոր, զիշխան, զաղքատ և զամենայն ոք»<sup>2</sup>:

<sup>1</sup> Ձեռ. № 1402, էջ 19ա—19բ:

<sup>2</sup> «Քարոզ վասն է մահու շափ մեղաց», ձեռ. № 2114, էջ 275բ:

Միանգամայն ճիշտ տվյալ է հաղորդում մեր հեղինակը. վաշխառուներն իրենց շոշափուկները տարածել էին անտեսության բոլոր բնագավառներում, և նրանցից կախման մեջ էին գտնվում նույնիսկ տիրապետող դասակարգի ազգեցիկ ներկայացուցիչներից շատերը:

Երկրի տիրապետողները, շահագրգռված լինելով, մտանոգվում էին անևտրական ճանապարհները ապահով դարձնելու խնդրով, այնուամենայնիվ հարատև ու արյունալի պատերազմական բախումների, Ֆլոդալական ու միջ-դինաստիական կռիվների պայմաններում, պարզ է, որ անևտրականները ստիպված պետք է լինեին ինքնապաշտպանության զիջելու: Ծանապարհներն ապահով չէին նաև գողերից ու ավաղակներից. «Նոքա են գողք,— գրում է Զուգայեցին,— որք ի ճանապարհի և յանգոս և ի կիրճս լերանց նստեալ զպահողոն յայանապէս յափշտակեն, որոց և գեղջուկքն հարամի ասեն»<sup>1</sup>: Անևտրական կարավաններն այդ պայմաններում շարժվում էին միայն զինված ջոկատների քնկերակցութեամբ: «Զի զէնք և հեծեալս անունն ընդ յինքեանց (ճանապարհորդք), զի թշնամիքն յաղթեալ՝ սատակեցին զնոսա» — հայտնում է Զուգայեցին<sup>2</sup>:

Քաղաքների շուկաներում ու փողոցներում կատարվող առևտրի ևս ու զեռի մասին Զուգայեցին առիթ է ունենում օգտակար տվյալներ հաղորդելու «Քննութիւն գործոց առաքելոց» աշխատության մի հատվածում, որտեղ ստուգարանում է «փողոց» բառը: Նա ելնում է Տաթևի համալսարանի միջավայրում քաղաքացիութեան ստացած այն սկզբունքից, ըստ որի առարկաների անունները գրված են նրանց հատկութեաններին համապատասխան: Նրա կարծիքով փողոց բառը կապ ունի «փող» (զրամ), «փող» (շնչափող) և «փոխ» բառերի հետ, որովհետև փողոցում «փողով են ամենայն արուեստք, որ ի նմա կատարի, զի առանց փողի ոչ անուն և ոչ տան», կամ «այս ինչ տան և զայլսն փոխեն, որպէս զարծաթն տուեալ և ի նորին տեղիսն անունն հաց կամ այլ ինչ», նաև այն պատճառով, որ «զամենայն ինչ ի նմա իրրև փողիւ. գոչէ, թէ աստ ևս, մանաւանդ տեարք ընչիցն ձայնեն՝ այս ինչ է առ իս»:

Հետաքրքիր է նաև շարունակութեանը. «Զղալսն (զրամի) յայանեն, զի ամենայն ոք զնէ և վաճառէ ի միտս իւր թիւրութիւն, իբր թէ զվաճառակիցս իմ խաբեցից...: Այլ ստուգարանութեամբ է, զի այն տեղիքն ոչ է այնպէս, զի զընակիչս իւր յաւիտեանս պահէ, այլ այսօր այս անուն խօճայ, ի վաղիւն՝ փոխի միւս ի տեղի նորա»<sup>3</sup>:

Ոչ պակաս հետաքրքրութեան է ներկայացնում նույն աշխատության մի այլ հատվածը, որը նվիրված է կրպակի, գողբակի, խանութի, փուտկա և պանդոկ բառերի ստուգարանութեանը: Զուգայեցու կարծիքով այդ բոլոր տերմինները միևնույն իմաստն ունեն՝ «ամենեքեան ստքա զմի իր նշանակեն, որ այժմ այլ լեզու քարուանսարան կոչին»: Հայտնի է, որ պանդոկը, նման եկեղեցու, բաժանված է լինում երեք բաժինների՝ «երիս տապաղայս. ի ներքոյ անասունքն, և ի միջին՝ մարդիկն և փոքր աղբանք, իսկ վերջինն՝ պատուական աղբաբեղէնք, սակեղէնք և ախունք պատուականք»<sup>4</sup>:

<sup>1</sup> «Քարոզ ի բանն՝ մի գողանար», ձեռ. № 2229, էջ 132ա:

<sup>2</sup> «Քարոզ մահու», ձեռ. № 2229, էջ 160բ:

<sup>3</sup> «Քննութիւն գործոց առաքելոց», ձեռ. № 1402, էջ 183ա:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 266ա—266բ:



Մ. Զուգայեցու և նրա ժամանակակից ալլ հեղինակներն աշխատութիւններում նմանօրինակ ավյալներ շատ կան, և հասկանալի է, որ այդ ավյալների հավաքմանն ու ի մի բերման միջոցով միայն մենք հնարավորութիւն կունենանք լրացնելու այն խոշոր բացը, որ սկզբնաղբյուրների պակասութեան հետևանքով գոյութիւն ունի միջնաղբյուրն հայկական քաղաքների ուսումնասիրութեան բնագավառում:

Ոչ պակաս արժեքավոր ավյալներ է հաղորդում մեր հեղինակը նաև քաղաքային կուլտուրայի, քաղաքներում տեղի ունեցող թատերական ներկայացումների, երիտասարդ քաղաքացիների հավաքույթների ու զվարճութիւնների մասին:

Իր քարոզներէց մեկում, օրինակ, ի նկատի ունենալով, ամենայն հավանականութեամբ քաղաքի արհեստավորական ու անտրական շերտերին, նա գրում է. «աներկիւղք և պակասամիտք ելեալ ի թատերս նստին անամօթացեալք, և ի դիւամոլ տեսարանէն աներևոյթ նետով վիրաւօրին, և թէպէտ ոչ մարմնով, սակայն դոգիս պղծեալ ապականին»<sup>1</sup>:

Հայագիտութիւնը դեռևս ստույգ ավյալներ չունի իր տրամադրութեան տակ միջնաղբյուրն թատերական ներկայացումների բովանդակութիւնը սրոշելու համար: Ճախք, այդ կարգի ավյալներ չեն գտնվում նաև Մատթեոս Զուգայեցու աշխատութիւններում: Այնուամենայնիւ, ալլ աղբյուրների հետ մեկտեղ հարցի քննարկման ժամանակ ուշադրութիւն են դրուելու նաև մեր հեղինակի կողմից գրանցված հետևյալ երկու ավյալները. «Ըմբշամարաք յորժամ ի թէատրոնն քնթանան մեծամեծք և փոքունք յարուցեալ մի դմիմեամբք անցանեն, դի տեսանիցեն դքաջութիւնս նոցա»<sup>2</sup>:

Որ թատրոններում տեղի էին ունենում նաև ըմբշամարտութիւններ, այդ հայտնի է նաև ալլ աղբյուրներից:

Հաջորդ մեջբերումը քաղում ենք Զուգայեցու «Հաւաքումն բանից, որ հայի առ Ձ աւուր գործս աստուծոյ» աշխատութիւնից.

«Թագաւորք, — գրված է այնտեղ, — նստեալ ի վերայ ապարանից իւրեանց՝ տեսանիցէ զխաղս թէատրոնի և ծագր առնէ զնոսա»<sup>3</sup>:

Ցանկալի էր այստեղ ակնարկված ներկայացման բովանդակութեան մասին ավելի շատ բան լսել, սակայն եղածն էլ բավական է հավաստելու համար, որ տեղի են ունեցել նաև ծիծաղաշարժ բովանդակութեամբ ներկայացումներ:

Միջնաղբյուրն քաղաքներում բանթողից հետո երիտասարդ արհեստավորներն ու անտրականները հաճախ հավաքվում էին խնճուղքի ու գինարբուքի: Այդտեղ էին մեր գուսանները երգում իրենց սիրո ու զվարճութեան երգերը, գեղեցիկի վարձակները՝ պարում երաժշտական գործիքների նվագակցութեան տակ: Հնչում էին աշխարհիկ բովանդակութեամբ տաղերն ու հայրենները: Եկեղեցական մատենագիրներից շատերն են պայքարել այդպիսի հավաքույթների դեմ, դրանցից է նաև մեր հեղինակը:

Այդ երիտասարդներին Զուգայեցին «լիտի» ու «յանդուգն» է համարում, իսկ նրանց մեղլիսներում կատարվածը՝ «աղտեղութիւն»: Նա գրում

<sup>1</sup> «Քարոզ ցաման, ի բանն տէր աստուած մեր, աւուր մեզ...» ձեռ. № 2229, էջ 251բ:

<sup>2</sup> «Քննութիւն դործոց ասարեկոց», ձեռ. № 1402, էջ 173ա:

<sup>3</sup> Ձեռ. № 774, էջ 310ա

է Վամենայն աւուր լիտիքն ու յանդգունքն ի քաղաքի ժողովին և անգլի ազգի աղաղակութիւն անեն, որ յերեկոյի ժամուն սայրան ասեն»<sup>1</sup>:

Մեջ բերած տվյալներով, հարկաւ, չեն սպառվում Մատթեոս Զուգայեցու հաղորդած տվյալները միջնադարյան կուլտուրայի ու գրականութեան տարրեր բնագավառների վերաբերյալ:

Մի տեղ, օրինակ, նա աշխատում է բացատրել, թե ձանձրութեան դեր մարդկանց ինչ որոգայթների մեջ կարող է նետել: Թվարկված որոգայթներից առաջինն այսպես է որոշված. «ատել տա զուսումն և ասէ՝ զինչ է այդ ամենայն, ս՛ կարէ ուսանել. և ազգի ազգի է. այս շարական է, և միւսն խաղտեար, և կցորդ, և Սողոմոն: Մին փոխ նարեկացի լաւ է, քան զամենայն սաղմոսս Գաւթի»<sup>2</sup>:

Այլ և այլ առիթներով իր աշխատութեան մեջ Զուգայեցին մեջ է բերում նաև ժողովրդական առածներ, որ «գեղջուկքն ասեն», «բանցից է՝ քարտին սէրն ի տուրս ձեռին երեկ» և «սուտ վկային հուրն է բաժին»:

Մի հոգվածի մեջ սպասիչ խոսք ասել Զուգայեցու աշխատութեաններում, իր ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերութեանների, կուլտուրական երևույթների, ժողովրդի կյանքի ու կենցաղի հարցերին վերաբերող առատորեն ցրված բոլոր նյութերի մասին՝ անհնար է:

Մեր հեղինակը շատ կարևոր ասույթներ ունի նաև միջնադարյան հերձվածողների մասին, որոնք «չայսմ աշխարհի զուտելն և ըմպելն և ըզհեշտութիւնն քարոզեն», բազմաթիւ անգեղութեաններ է հաղորդում ժողովրդի իրավական ու տնտեսական վիճակի մասին, անդրադառնում է վանական տնտեսութեանը և որոշում վանքի գործավորների պարտավորութեանները, գործ է ածում սոցիալական, ազմինխտրատիւ, հարկային ու իրավական բազմաթիւ սակավադյուտ տերմիններ (օրինակ՝ հող, տոնլուխ, բասխախ, դասպալայ, ճարտ) և այլն, և այլն:

Այս բոլորից հետո տարակուսել չի կարելի այն բանում, որ Մատթեոս Զուգայեցին գրավելու է իր վրա միջնադարյան պատմութեան այլ և այլ բնագավառներն ուսումնասիրող պատմաբանների սեկսուն ուշադրութեանը:

Ինչպէս նրա կողքով ստանաւարտորեն չսկեռք է անցնեն նաև միջնադարյան հայ հասարակական մտքի ու գիտութեանների պատմութեան հարցերով զբաղվող մասնագետները: Նրանց ուշադրութեանը ներկայացնենք մի քանի ուշադրով փաստեր:

Մեր կարծիքով Զուգայեցին առաջին հայ հեղինակն է, որ փորձել է որոշել, թե որոնք են բնութեան մեջ ի սկզբանե ստեղծված նյութերը: Նրա կարծիքով այդ նյութերն են՝ ոսկին, արծաթը, պղինձը, անագը, կապարը, երկաթը, լածվարդը, ժիպակը, ծծումբը և զանազան թանկագին քարերը<sup>3</sup>: Նա ձգտել է տալ նաև վերոհիշյալ սկզբնական նյութերի հատկութեանները և տարբերութեանները միմյանց նկատմամբ: Պղնձի հատկութեաններն, օրինակ, նա բնորոշում է հետևյալ կերպ. «Իսկ պղինձն ունի բազում հատկութիւն. նախ՝ զի ժանգ ունի բնական և դառն է, և առանց կապարի ոչ հալի: Երկրորդ՝ զի մաշէ զգործօնեայս իւր: Երրորդ՝ զի փաստկար հոտ

<sup>1</sup> «Քննութիւն գործոց առաքելոց», ձեռ. № 1402, էջ 232ա:

<sup>2</sup> «Վասն քարոզութեան բանի», ձեռ. № 6607, էջ 52:

<sup>3</sup> Տես «Հաւաքումն բանից», որ հայի առ Զ աւուր գործս ասուածոյ», ձեռ. № 774, էջ 331բ—332ա:

ունի...: Չորրորդ՝ զի սրակ կարմիր ունի: Հինգերորդ՝ զի ապականիչ է սոկոյ և արծաթոյ: Վեցերորդ՝ զի միայնակ ինքն ոչ ունի գեղեցկութիւն և ոչ յանօթ պիտոյանա: Եւթներորդ՝ զի ջեռուցանէ զջուրն: Ութերորդ՝ զի ազդումն տա ի կերակուրն փութով: Իններորդ՝ զի ջերմութիւն հրոյն թափանցէ ի նա իսկոյն, յորժամ հասանէ ի նա: Տասներորդ՝ զի նա է միաւորիչ երկաթի՞: Նման ձևով նա որոշում է նաև մյուս նյութերի հատկութիւնները:

Պարզ է, որ Զուգայեցու այս աշխատութիւնն արժանի է մեր քիմիկոսների ուշագիր քննութիւնը:

Շատ ավելի մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում, մեր կարծիքով Մատթեոսի բնագիտական հայացքները: Իր քարոզներից մեկում նա արտահայտում է այն միտքը, որ մարդիկ ևս սկզբից եղել են չորքոտանի, հետո միայն, անհրաժեշտութիւնից դրդված նրանք կանգնել են հետևի ստեղծի վրա, իսկ առաջին երկուսը ուղղելով՝ դարձրել են իրենց համար գործիք: Անասունների և մարդկանց տարբերութիւնը Զուգայեցու կարծիքով հենց կայանում է նրանում, որ անասունները զուրկ են մտածելու ունակութիւնից, ուստի և չորքոտանի են մնացել:

Բնագիտութիւն մասնագետներին թողնելով այս շատ ուշագրավ մտքի արժեքավորումը, անհրաժեշտ ենք համարում առանց կրճատման մեջ բերել նշված քարոզի մեզ հետաքրքրող հատվածն ամբողջութեամբ, հնարավոր կասկածների առաջն առնելու համար:

«Զի մարդս,— գրում է Զուգայեցին,— կրկին գործ ունի առնել, մին՝ զի ստօքն ընթանայ, և միւսն՝ զի առնէ արուեստ և գործէ զերկիր ձեռօք: Արդ, զի անասունք ոչ ունին միտք որով արուեստ առնեն, վասն որոյ ոչ պիտոյանայ նոցա ձեռք, իսկ մարդս ունի իմաստութիւն և գիտութիւն և արուեստ և բան, որոց կարօտանան ձեռք, վասն որոյ ի հարկէ ի վերայ երկուց ստից կանգնեցաւ և զերկուսն ուղղեալ գործի շինեաց բնութիւն բանին և արուեստին»<sup>2</sup>:

Իր կյանքի վերջին տարիներում, ինչպես արդեն նշել ենք, Մատթեոս Զուգայեցին վիրավորանքներ է կրել իր «անգութ և անհնազանդ» աշակերտներից և դառն վշտացել «սուտ եղբայրների» հալածանքներից: Նա ոչինչ չի հայանում այդ վիրավորանքների ու հալածանքների սլառճանների մասին. մենք էլ վաղաժամ ենք համարում որոշակի սրեւէ բան ստելբայց չի կարելի՞, արդյոք, մտածել այն մասին, որ Զուգայեցուն հալածելու վշտացրել են հենց նրա արտահայտած ուշագրավ դադարների համար:

Իր վերջին աշխատութիւնն հիշատակարանում մեր հեղինակը վշտով արձանագրում է այն փաստը, որ հայերը օտարամուլ են, խոնարհվում են այլազգի հեղինակութիւնները՝ առջև և, բնորակապէս, արհամարհում են սեփական գիտնականներին, նույնիսկ այն դեպքում, երբ օտարների նկատմամբ նրանք ունեն ակնառու առավելութիւններ: «Այլ և սովորութիւն է բնական մերոյ ազինս,— գրում է նա,— ի յօտար ազգաց իմաստից բանին ցանկալ և որոնել, թէև կարի յեանոց է արարեալ և զնոյն ընթեանուլ, և զիւրոյ հօր, թէև կարի մեծաց է աշխատեալ՝ ոչ բնորունել, վասն որոյ

<sup>1</sup> Ձեռ. 774, էջ 333ա:

<sup>2</sup> «Քարոզ ի բանն՝ Մարդ պատուի էր և ոչ իմացաւ», ձեռ. № 2229, էջ 109ա:

աղաչեմ մի դանմաութիւնս զայս ի գործ ածել, այլ ընդ օտարացն և զքոյս սիրել և մեծարել»<sup>1</sup>:

Ծշմարտացի քննադատության այս խոսքը ավելորդ չի լինի կրկնել նաև մեր ժամանակներում, թեկուզ և այն պատճառով, որ մենք մոռացության ենք մասնել Մատթեոս Զուգայեցու նման մի խոշոր գործչի ու գիտնականի:

\* \* \*

Մատթեոս Զուգայեցին միակը չէ միջնադարյան մոռացված կամ պատշաճ ուշադրություն չգրաված հեղինակներից: Այս կամ այն չափով նրան են նմանվում Սարգիս Ծնորհալին, Վարդան Այգեկցին, Վարդան Արևելցին, Հակոբ Կլայեցին, Բարսեղ Մաշկեորը, Առաքել Սյունեցին և բազմաթիվ այլ իրենց ժամանակ մեծ դեր կատարած մատենագիրներ ու գիտնականներ: Նրանց մեծագույն մասը թողել է մեզ միայն աստվածաբանական աշխատություններ, կրոնական մեկնություններ և բարոյագիտական քարոզներ: Իրանց մեջ, ճիշտ այնպես ինչպես Մատթեոս Զուգայեցու աշխատություններում, հսկայական օգտակար նյութ կա գրանցված:

Կարծում ենք, որ հասունացել է միջնադարյան մեր մատենագիրների այդ կարգի աշխատություններից՝ ըստ թեմաների կամ ըստ հեղինակների կազմված քաղվածու ժողովածուներ հրատարակելու ժամանակը: Այդ ճանապարհով միայն հնարավոր կլինի մասամբ լրացնել սկզբնաղբյուրների այն խորը պակասը, որ զգում է յուրաքանչյուր պատմաբան իր աշխատանքի հենց առաջին քայլափոխին, երբ փորձում է ձեռնարկել միջնադարյան Հայաստանի ներքին կյանքի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման գործին:

<sup>1</sup> ԺԵ դարի հիշատակաբաններ, էջ 120—121: